

26.373

№ 1


ԱՐՁԵՍՏԱԳՈՐԾԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1

334.6
Հ - 60

Մ. Ռ Ա Գ Ի

ՄԵՆԱԿ ԹԵ ԱՐՏԵԼՈՎ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԱՐԿՈՂՈՔ

ՅԵՐԵՎԱՆ 1927

24 JUL 2013

26. 373

10 JAN 2010

№ 1 ԱՐՁԵՍԱԳՈՐԾԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 1

334.6
Դ-60

Մ. Ռ. Պ. Գ. Ի.

ՄԵՆԱԿ ԹԵ ԱՐՏԵԼՈՎ

ԹԱՐԳՄ. ԱՐՏ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

1000
30822



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱԿՈՈՐԴԻ

ՅԵՐԵՎԱՆ

1927

ԳԼՈՒԽ 1.

ՎՈՄԱՆՔ ՏՐՏՆՁՈՒՄ ԵՆ, ԻՍԿ ՎՈՄԱՆՔ ԷԼ ԳՈՐԾՈՒՄ

Հողագործությունը միշտ և ամեն տեղ չի տալիս զյուղացուն նրա ամբողջ տարվա հացը։ Շատ տեղերում հաղիվ կես տարի յեւ բավականանում իր հացը և ձմքան կեսերից զյուղացին ստիպված և մտածել հաց առնելու մասին և կողմնակի միջոցներեւ դիմել։

Տնայնագործական արհեստներն ոգնում են զյուղացուն
իր տնեսությունը վարել յեվ կերակրվել

Յերբ կողմնակի աշխատանք չի լինում և կամ զյուղացին չի ցանկանում թողնել իր տնատեսությունը, այդ ժամանակ տնայնագործական արհեստը հաճում և նրան նեղ վիճակից։ Զմեռը, զաշտային աշխատանքներից ազատ ժամանակը և ամրան աշխատանքների ազատ միջոցները նա ոգագործում և անայնագործական գործվածքներ պատրաստելով։

Իսկ ի՞նչ է ստանում տնայնագործն իր ոժանդակ աշխատանքից

Նայելով թե վորտեղ։ Մի տեղ տնայնագործները, թեև շատ ել գուն չեն լինում, բայց չեն արտնչում, իսկ մի ուրիշ տեղ աղաղակում են կարիքից։ Ոժանդակ աշխատանքը յերբեմն զաժան ստրկություն և գառնում նրանց համար։ Տնտեսությունը չի վերականգնվում, կարիքը չի հեռանում խրճիթից։ Յեվ ամենից զարմանալին այն և, զոր տնայնագործը հաճախ ավելի շատ, ավելի հիմնագոր և աշխատում, քան թե հափկագոր և։ Նրա գործվածքները լավ ծախում են և գներն ել վատ չեն լինում, բայց նրան, անայնագործին, ելի միայն փշրանքներ են հասնում։

Իսկ ինչո՞ւ յեւ այդպիս

Աչք ածելով իրենց կյանքի վրա շատ անայնագործներ բը-զավում են, ասելով՝ «մենք ելի կաշկանդված ենք, մենք զբժ-քախտ աշխատավորներ ենք՝ միջոցներ չունենք հում նյութեր առնենք, պատրաստենք՝ և ինքներս տանենք շուկա ծախենք ու մեր ոգուաները տալիս ենք միջնորդներին։

Գիտակից տնայնագործները, սակայն, վոչ թե բղավում, այլ յեվ զործում են

Աշխատանքը դնել չի մանաւը — ահա, թե ինչն է կլանում տնայնագործի վաստակը։ Դրանից և առաջանում և չարչիների միջոցով անհաջող վաճառահանումը, և մեքենաների փոխարեն լոկ ձեռքերով աշխատելու ծանրությունը, զրանից և առաջանում և մատերյալների, և բոլոր անհրաժեշտ առարկաների յերեք-չորս անգամ բարձր զներով տասներորդ ձեռքից առնելը։ Իսկ ամենապլիսավորն ել — անկազմակերպ և մենակ, անհատական ուժերով աշխատելն եւ։

Գլուխ Ա.

ԽԿ ԻՆՉ ԱՐԻՆ ԻՐԵՆՑ ԴԺՎԱԽՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՀԱՍԿԱՑ ԳԻՏԱԿԻՑ ՏՆԱՅՆԱԳՈՐԾՆԵՐԸ

Վերցնենք մի որինակ. — Ծայդանակի նահանգի Սպատակեակադեմիան գավառում, գերմանական պատերազմի որերին սնկի պիս բազմացան չարչիները (ԸԿՍԱԿԱ)։ Դրանք իրենց ձեռքի մեջ հավաք, քեցին գավառի բազմաթիվ տնայնագործներին. շատերը նույնիսկ գրասենյակներ հիմնեցին և այդտեղերից եյին աշխատանքներ հանձնարարում ցրված, մենակ աշխատող տնայնագործներին։ Իբրև թե աշխատանք եյին տալիս «բարերարություն» անում, բայց իսկապես անխիզգ կերպով շահագործում, տնայնագործի արյունն եյին քամում և իրենց թաթերի մեջ կապկառում։ Տնայնագործի ամբողջ ընտանիքը՝ փոքրից մինչև մեծն աշխատում եյին որական 18 ժամ և չնայած զրան կարեքը բոլորովին չեր պակասում։ Աշխատանքի ծանր պայմանները և կարիքն այդ գտնառի տնայնագործների մեջ ցանկություն առաջ բերին ազատվելու կուլակների ճանկերից։ Երանք արտել հիմնեցին։ Չարչիներն արտելի դեմ կատաղի կոփի սկսեցին։ Միջոցների մեջ խարություն չդնելով, իրենց ազգեցության տակ ընկնող թուլամորթ վարպետների և կեղտու մարդկանց միջոցով զրանք աշխատեցին քանդալ արտելը։ Յերբ այդ ջանքերն անհաջող անցավ, փորովենեան արտելի անդամ վարպետները վոչ միայն չգնացին իրենց թշնամիների հետեւից, այլև դուրս վանտեցին իրենց շաբաթերից այդ ազգուկ-աղաներին։

Կայլը նկանիլ եր 1915 թվին և միայն վերջին ժամանակական ավարտվեց արտելի հաղթանակով։ Այդ արտելն այժմ ամենաառաջիններից մեկն եր զործերի հաջողության և անդամների լավ վաստակի տեսակեաից (նա գտնվում է Մոսուրվակ գյուղում)։ Պետք է խմանալ, թե ինչն է ոգու տախի տնայնագործին յեվ ինչը՝ վեստ

Ժամանակ ե, վոր տնայնագործները վերջ տան ձրիակերներին և իրենց աշխատանքով նրանց գրպանները լցնեն։ Թե ինչ ողուա կարելի յն տոանալ չարչուց և ինչ իր հարադատ արտելից — այդ գժվար չե հասկանալ։ Բավական և իմանալ, թե ինչպես են վաճառվում պատրաստած ապրանքները և թե տնայնագործի արտադրանքն ինչ ճանապարհով և հասնում ապառողի ձեռքը։

Գլուխ Ա.

ՏՆԱՅՆԱԳՈՐԾԻ ՇԽԱԾ ԳՈՐԾՎԱԾՔՆԵՐԸ ՅԵՐԿԱՐ ՃԱՆԱԿԱՐՀՈՐԴԻ ՇՈՒՐՈՒԴՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԿԱՏԱՐՈՒՄ

Յենթագրենք թե Դիլիջանի տնայնագործն իր տանը նստած կողովներ կամ զամբյուղ և պատրաստում. այդ առարկաները միայն նբա զյուղում չեն վաճառվում և, հաճախ տնցնելով հարյուրավոր վենասեր, համում են Բասար-գեշարի կոմ Քությայիսի գեղջուկների ձեռքը։ Մեր տնայնագործն տնմիջական կապ չունի այդ պատուղների հետ, նա չի կարող իր հյուսվածքն այս կամ այն տեղն ուղարկել հաստատ հասցեյով։

Ինչպիս է տնայնագործի կողովը գտնում իր սպառողին

Այստեղ պետք և հիշել, վոր բոլոր քաղաքներում և գյուղերում վիտում են միջնորդ-զնողները, սրանք բոլորն ել իրար հետ կապված են, մեկը մյուսին հարց ու փորձ են անում, թե վորտեղ ինչ և արտազգում, վորտեղ ինչ պահանջ կա։ Յեկ, ահա, ում հարկավոր են կողովներ նա պատվիրում և Դիլիջանի շրջանի միջնորդ-առևտրականին ձեռք բերել իր համար։ Սա առնում է տնայնագործից, առաջ յերկրորդին, յերկրորդը յերրորդին և, այդպիս ձեռքից ձեռք անցնելով, կողովը հասնում է սպառողին։

Այդ նույնը կրկնվում է ամեն մի տնայնագործական արտադրանքի նկատմամբ։

Ճանապարհորդության համար պետք է վճարել

Միջնորդ չարչին ի հարկե, ձրի չի աշխատում: Յեթի սպառողը մի կողովի համար վճարում և 50 կոտեկ, ապա տնայնագործին բաժին և ընկնում 20 կոտեկ, իսկ 30-ը դնում և այդ ձեռքից ձեռք տվող միջնորդների դրամնը:

Ի՞նչով են ուժեղ միջնորդները

Երանք գյուղից քաղաք և քաղաքից գյուղ ամբողջ յերկրում սերտ կազ են պահպանում իրար հետ, և կազմում են մի մեծ շրջան: Դրանցից ամեն մեկն այդ շղթայի մի ողակն և կազմում: Յեթի մի վորեւ տեղից մի միջնորդ հասանում և մի այլ շրջան, տող նրա տեղն իսկույն մի ուրիշն և ընում:

Տնայնագործի գործվածքն ինքն իրեն չի կարող քաղաքից քաղաք ման գալ և հասնել սպասողի ձեռքը. իսկ ասանց սպասողին իր արտադրանքը ծափելու, մեր տնայնագործը հաշիվ չունի աշխատանք թափելու և գործվածքներ շինելու: Նա ստիպված և իր աշխատանքի պատուղը ծափել տեղական միջնորդ կուլակին: Իսկ սա մյուսներին և այլքես մինչև կը հասնի սպասողին: Դրանցից ամեն մեկն աշխատում և քիչ վճարել տնայնագործին, վորպեսզի վաճառելուց իրեն մեծ աշխատանք մնա:

Այսպես, տնայնագործը շրջապատված և այդ արյունուշտ միջնորդների մի մեծ ցանցավ: Դրանք ըստորն ել միասին և խոսքները մեկ արած շահագործում են տնայնագործներին, տեղերում գտնվող իրենց նման սորգերի միջացով:

Այստեղից—մի գառ մեզ համար—զբանց միացյալ ուժի դեմքետք և գուրս գալ միացյալ ուժերով:

Տնայնագործները պետք է միացյալ ուժերով կռվեն

Միջնորդներն ու առևտրականները միշտ սպաշտականում են իրար: Տնայնագործներն ել պետք և միշտ իրար ողնեն և միացյալ ուժերով կողենու և մրագ գիմացդ դուրս յեկող թշնամու զեմ չես կարող կովել բաժան-բաժան, ցրված ուժերով, ձիշտ այնպիս, ինչպիս չի կարելի կազմակերպված կանոնավոր զորքի զեմ խուժանով դուրս գալ, այդ գեպքում «մեկը նալին կը տա, մյուսը՝ «մեխին»: Պետք և հավաքել ուժերը և միացյալ ձականով կովել: Այդ մասին կը խոսինք մյուս զլիում:

Գլուխ 14.

ԴԱՇՈՒՅՆԸ ԳՈՏՈՒԴ Ե—ԿԱՐԻՔ ԶԿԱ ՆՐԱՆ ՓՆՏՐԵԼՈՒ

Տնայնագործները լավ դաշույններ ունեն միջնորդների և առևտրականների համար զարգաց ար և այլ այլ աշխատանքների մեջ տնայնագործներն արգեն կազմակերպել են 50 արտեհներ 650 անդամներով:

Այդ արտեհները միացել են և կազմել Արտեհների Միություն՝ «Հայոնարկուող»-ը:

Դա փոքրիկ ույժ չե

Բայց զա գեռ բավական չե: Դեռ հազարավոր տնայնագործներ առաջվա պես մնում են առևտրականների ձանկերի մեջ:

Բայց ի՞նչ ե արտելը

Տնայնագործները սխալվում են, կարծելով, թե կարելի յե աշխատել մենակ, ամեն մեկն ինքն իր համար և իր կամքով: Տնայնագործները միշտ ել միացած են: Յերբ չկա արտել—նրանք միացած են միջնորդառևտրականի շուրջը: Բայց զրանց շուրջը համախմբվելու և արտեհների մեջ միանալու տարրերությունը շատ մեծ է: Արտելը բարձրացնում և իր յեկամուտները և գրա հետ միասին նա բարձրացնում և իր տմեն մի անդամի յեկամուտները: Իսկ առևտրականների շուրջը միանալուց, վորքան ել վոր յեկամուտները բարձրանան, ոգուտի մեծագույն մասը գնալու յե գետի «բարելարների» անտակ զրպանները:

Արտելն իր միջից ընտրում և մի քանի հոգի՝ ընդհանուր գործը տանելու համար: Այդ ընտրվածներն ել հենց կազմում են արտելի վար չու թյունը:

Այդ գարչությունը մաածում և հում նյութեր ձեռք բերելու մասին, վորոնում և թե վորոնի վաճառի տնայնագործների պատրաստած գործվածքները: Նա հոգ և տանում արտելային աշխատանքի այնպիսի կողմերի մասին, վորոնց մասին չարչիները բոլորովին ել չեն մտածում, վորոնց զիմ նրանք նույնիսկ կովում են: Վարչությունը միջոցներ և ձեռք առնում աշխատանքը թեթեացնելու, հետեւում և, վոր տնայնագործի առողջությունը պահպանվի, նպաստում և արտադրականության բարձրացման: Ձիշտ զործող գարչությունն ամենից առաջ տն այն ագործի շահերի մասին և մտածում և նա հենց զրա համար և ընտրվել:

Տնայնագործների շահերը պաշտպանելու հարցում ամենից պարզ է յերկում վարչության տարբերությունն առեւրականից: Դրսից նայելով, կարծես թե և մեկը և մյուսը միենույն աշխատանքն են տառում: Առաջ առեւրականն եր գործվածքները վերցնում, իսկ այժմ վարչությունն և վերցնում: Առաջ հում նյութերն առեւրականն եր մատակարարում, իսկ այժմ—վարչությունը:

Խելքից հանված և անգիտակից անայնագործներն ասում են՝ «Ե՞ն, մեղ համար միենույն չե՞ն, թե ով և վերցնում, միայն թե վերցնի»:

— Բոլորովին ել միենույն չե՞—կարող և պատասխանել նըրան այն անայնագործը, վոր հասկացել եւ, թե ինչ բան և արտելը: «Եյո սոխ ե, բայց սխառը չե»—միջնորդ չարչին վարվում է այնպես, ինչպես իրեն և ոգուտ. նա յերկար չի խոսում, իսկ խոսելուց ել կարձ և կտրում:

«Ուզում ես տուր, չես ուզում—յեկած ճանապարհովդ գնա՞»:

Այդպես չե վարչության մեջ: Ենտեղ մեր ընկեր անայնագործն և նստած: Նա հաշիվ չունի գինն իջևնելու, ազմելու: Նրա շահերն ամուր միացված են մեր շահերի հետ: Բացի այդ եւ, ընդհանրապես, ով վոր ել նստած լինի վարչության մեջ, պիհաք և հաշիվ տա մեղ իր արածների մասին: Վարչությունը մեղնից և ընտրված և յեթե նա վաս կամ սխալ աշխատի—մենք միշտ ել կարող ենք փոխել և նորն ընտրել:

Ի՞նչ է Տալիս արտելը Տնայնագործին.

Արտելի ոգուտն ավելի պարզ կարելի յե տեսնել, յեթե արտայնագործական աշխատանքի առանձին կողմերը քննենք, յեթե համեմատենք, թե ինչ ունի մենակ աշխատող անայնագործը և ինչ և ստանում արտելի անդամ անայնագործը: Հում նյութի քարձը արժեքն իջևնում է մենակ աշխատող անայնագործի վաստակը: Քիչ մշակելուց ել և պակասում նրա վաստակը: Ի հարկե միենույն չե մի բանվորական որում անայնագործը յերեք բան կշնի, թե մեկ: Տնայնագործը մասավում և նաև շրջանառության միջոցների պակասությունից և դեռ ելի շատ պատճառներից:

Տեսնենք, թե ինչպես են փոխվում դործի բոլոր հիշված կողմերն արտելային աշխատանքի ժամանակ:

Առաջին—գնումներն արտելային կարգով կատարելուց իշխում և հում նյութի ինքնարժեքը

Առանձին և քիչ քանակությամբ գնելուց անայնագործը միշտ պամարներ և վճարում, վրափհանում հում նյութը շատ միջնորդների ձեռքից և անցնում: Ոգտվելով անայնագործի անուշագրությունից կամ հում նյութի բացակայությունից, առեւրականը սաղացնում և վատ տեսակները: Իսկ յերբ վատ և հում նյութը—գժվար և աշխատել և գործվածքներն ել լավ չեն դուրս գալիս: Արտելի, կոռպերատիվի միջոցով և մեծ քանակությամբ գնելուց անայնագործը լավ հատկության նյութ և ստանում և եժան գնով. ոգտվում և և ծախքերի և հատկության մեջ, ինտյում և իր ժամանակն աշխատանքի համար. կարիք չի գգում որեր կորցնելու հում նմութ վորոնելու համար:

Արտելի միջոցով հետև և վարկ ստանալ

Միայնակ-անայնագործը գժվար և վարկ գտնում: Դրամ ունեցողը վախենում և վարկ տալ—ըլինի թե կորչի: Ո՞վ գիտե ինչ կարող և պատահել անայնագործին: Զիստելով մահվան մասին, վոչ վոր ապահոված չե հիվանդությունից, տնտեսության մեջ պատահող զանազան տեսակի պատահարներից: Յեկ վորքան չքաշվոր և անայնագործը, այնքան ավելի դժվար և դանել ծամանը որերի համար:

Ցեթե նա գնա վարկային ընկերություն. նրանից ապահովություն կպահանջեն. իսկ ինչ մի առանձին ապահովություն կարող և տալ չքաշվոր անայնագործը: Սակայն առանց ապահովության ել վարկային ընկերությունը չի կարող տալ: Նա ինքն ել փոխառած միջոցներով և աշխատում և պարտավոր և ժամանակը լրանալուց վճարել իր պարտքերը: Այդ պատճառով նա ստիպված և ժամանակին պահանջել նրանցից, ում ինքն և վարկ տվել:

Այլ և գրությունն արտելում: Արտելները փողը կտան և կը տան յերկար ժամանակով խոշոր գումար և փոքր տոկոսով:

Վարկային ընկերությունը կամ միությունը, բանկը հավատացած են, վոր արտելն իր պարտքը կվճարի: Տրվում և վոչ թե ստառձին անայնագնութներին, այլ բոլորին միասին, արտելի ընդհանուր պատասխանառությամբ: Զի վճարի անդամներից մեկը նրա փոխարեն կվճարեն մասցայները:

Փող կստանա արտելը, կստանան և արտելի անդամները: Այսպիս, արտելի միջոցով անայնագործն ավելի հեշտ և ավելի շուտ և վարկ գտնում:

Արտելային աշխատանքի զանագան թշնամիները անտայնագործներից վոմանց վախեցնում են, ասելով, թե արտելը թալանչիների ասպարեզ և և ազնիվ անայնագործն ստիպված պետք ելինի այդ ուրիշի բարիքը սիրողների փոխարեն ինքը վճարել նրանք վախենում են արտելի միջոցով վարկ վերցնել և գերազանում են ավելի բարձր տոկոսներ վճարել կուլակներին: Զուր վախ: Յեթե արտելի վերցրած դրամները բաժանվեյին բոլորի միջ հավասար, աշքի չառնելով արգոք պետք ե, թե վոչ—զուցե և թյուրիմացություններ առաջանային: Սակայն զրամ տալուց արտելը ստուգում և քննում ե, թե ով է ինչի համար և վերցնում:

Վարկ ստանալ կարելի յե միայն աշխատանքի և հում նյութ գնելու համար: Արտելը կարող և պայման զնել, վոր այդ վարկով շինած գործվածքներն անպատճառ իրեն հանձնվին: Արտելն այդպիսով ապահովում և իրեն ապագա գործվածքներով:

Յեթե տնայնագործը վարկ և խնդրում հում նյութի համար, արտելը կարող և տալ և վոչ զրամով, այլ անհրաժեշտ նյութերով: Դարձյալ անհշան և հետ չտանալու վախ:

Հազիվ թե շատ պատահեն այնպիսի անայնագործներ, վորոնք ի չարը գործ զնեն ստացած վարկը և փակեն այդ ձեռնուու պայմանները:

Հերշապիս արտելի անդամներն իրար լավ են ձանաչում, գիտեն, թե ինչ կարելի յե սպասել այս կամ այն անդամից: Գիտեն, թե արդյոք նա զրամները կիսմի, քեփ կանի, թե գործի միջ կընի, արտազրության համար կծախուի: Ազակի անդամը չեծածկի իր վաստակի չափը և հեշտ և խմանալ, թե ինչու չի կարուցել ժամանակին վճարել իր պարաքը:

Ամենազլիս ել այն ե, վոր վարկային կազմակերպությունից վերցրած դրամի դիմաց, արտելը պատասխանառու յե միայն իր ունեցվածքով և անդամների գույքի վրա պահանջ գնել չի կարելի: Այնպես վոր ճիշտ չեն այն վախերը թե կարելի իր վել կեզառ պատմությունների միջ:

Վարկայից ե վարկ ստանում արտելը

Կոռպերացիան ունի իր բանկը, այսպիս կոչված Համամիությունների կոռպերատիվ բանկը: Այս բանկի միջոցները հավաք-

վում են նրա միջ մտնող կազմակերպությունների փայտվածութերից և պետությունից ստացված դրամական վարկերից:

Կոռպերատիվ բանկը (կրծատ նա կոչվում և Համապարանկ) մի շարք քաղաքներում ունի իր բաժանմունքները (Հայաստանում նրա բաժանմունքը գտնվում է Յերևանում): Վարկի կարիք զգալով արտելը կարող և կամ ուղարկի դիմել Մոսկվա բանկին և կամ տեղերում գտնվող բաժանմունքներին:

Դրանից բացի բանկը վարկեր և տալիս արհեստագործական արտելների միություններին, իսկ սրանք ել իրենց հերթին՝ արտելներին:

Արտելներին վարկավորում և և պետական բանկը:

1925 թվի նոյեմբերին Համառուսական կոռպերատիվ Բանկում առանձին խորհրդակցություն կայացավ այն մասին, թե ինչպես վարկ տալ ստորին կոռպերատիվ կամզակերպություններին, այսինքն արտելներին, ընկերություններին և այլն: Վորոշվել եր վոր գյուղական տեղերում վարկերը տալու յեն գյուղ-վարկային ընկերությունների միջոցով, քաղաքներում և ավաններում կարող են կազմվել առանձին արհեստագործական և արհեստագործական վարկային ընկերություններ:

Այս բոլորից պարզվում ե, թե վորակեղից կարող և արտելը վարկ ստանալ ցույց են տալիս մենակ-տրայնագործին թե վորքան նա կը թիթեացներ իր աշխատանքը, վորքան կապահավեր իր գործը, յեթե արտելի անդամ գտնար:

Առանձին պետ և դնել հում նյութերի վարկավորման հարցը

Հում նյութերի բացակայությունը—գա տնայնագործի աշխատանքի ցավոս կողմի և հում նյութը հաճախ ստիպում և նրան գնալ և զլուխ խօսաբանի առերականին—միջնարդին: Հում նյութով չապահովված տնայնագործը յերեք համարված չե, թե իր աշխատանքի ընթացքում ընդմիջումներ չեն լինելու:

Խորհուրդների Ալ-բգ համագումարում խորհրդակցին իշխանությունը վորոշել ե, վոր անայնագործին պետք և ապահովել հում նյութերով, պետք և նրան հնարավորություն տալ աշխատելու այն լիակատար համոզմունքով, վոր նա հում նյութեր ունենալու յե:

Ամբողջ հում նյութերը արգելու յեն տնայնագործներին արհեստագործական միությունների և Համառուսական արհեստագո-

բական կոսպերատիվների միության միջոցով։ Բացի այդ, բոլոր պէտական առևտութական արդյունաբերական ձեռնարկները պարագաներ են իրենց աշխատանքի ծրագրի մեջ մտցնել անայնաղործ-ներին անհրաժեշտ հում նյութեր մատակարարելու գործը։

Թիչ կարզով պետք է հում նյութեր սրվես
Տնայնազործներին .

Վարոշիկը է հում նլութերն այնպես մատակարարել, վորանայնագործն առաջուց իմանա, թե վորքան և նրան հասնելու իսկ միությունն ու պետական ձեռնարկն առաջուց իմանան, թե վորքան հում նյութեր են հարկավոր տնայնագործին: Արտեխների և միությունների վրա պարտականություն և դրված տեղեկություններ հավաքել տնայնագործներից, թե ինչ հում նյութեր են պահանջվում և վորքան: Իր անդամների ստոհանջը պարզելով արտելը ներկայացնում է այն տեղական միությանը, իսկ միությունը—արհեստագործական կոոպերացիայի Համամիությունական կենտրոնի:

Տնայնագործների պահանջների հիման վրա պատրաստած հում նյութեն ուղարկվելու յին տեղական միություններին, այդ- տեղից արտելներին, իսկ արտելներից ել տնայնագործներին:

Այսպիսի կարգութեան կամոնի ժամանակ տնայնագործը կարող է հանգիստ աշխատել: Նու դիտե, վոր իր խնդրած քանակությամբ հում նյութերը ժամանակին կը ստանա: Տնայնագործն ազատ-վում և նաև այդ հում նյութերից պատրաստած զործվածքները վաճառքի հանելու հոգսերից: Ամբողջ զործվածքները պարտապիր կերպով ընդունում են այն կազմակերպությունը, վորը հում նյու-թերն է ամփել:

Հով նյութերը սրբութ են պարեն

Յամայնագործը միջոցներ չունի իր ստացած հում նյութի արժեքը վճարելու, այդ դեպքում նա ստանում է վարկով։ Նյութերի դիմաց վճարելու համար զանազան ժամանակներ (ժամկետներ) են վորոշված։ Աչքի ստաջ և ունեցվում թե ինչքան ժամանակ է պետք, վարպետի տնայնագործը պատրաստի գործվածքը և վաճառի կամ հանձնի։ Վարկի ժամանակը յենթադրվում է 3 ամսնից մինչև 1 տարի։

Խարա յէ միայնակ տնայնազործների հետ զործ ունենալը

Տնայնագործներին հում նյութեր մատակարարելու համար խորհրդային իշխանության ձեռք տուած միջոցներն հենց անմիջապես թեթևացնում են նրանց աշխատանքը։ Բայց այսուղ առաջ է գալիս մի մեծ զժվարություն՝ ինչպես բաց թողնել հում նյութերը միայնակ-աշխատող տնայնագործին, վճնց վարկ տալ նրան։ Արտելի հետ հեշտ է գործ ունենալ։ Իր ամեն մի անդամ-տնայնագործի համար արտելը պատասխանատու յի, արտելի անդամը ժամանակին կամ փողը կվճարի, կամ իր գործվածքը կը հանձնի։ Միայնակ-տնայնագործի փոխարեն վոչ փոք պատասխանատու չի։ Հասկանալի յի, զոր նրան վարկ տալուց շատ մեծ զգուշությամբ են մոտենալու։ Հո չի կարելի նյութերը ցըել հայտնի չի, թե ուր։

Վճռված է ասայիմ միայնակ-տնայնագործներին հում նյութեր մասակաբարել մոտակա արտեների միջոցով. խոկ յեթե այդպիսիները չկան, այն ժամանակ տնայնագործը պետք է կապ, հաստատի միության կամ պետական ձեռնարկների հետ. Ի՞նչ կը ստացվի սրանից: Տնայնագործը քաղաք կգա, խոկ այնտեղ վճառ միության մեջ և վճառ կը պետական ձեռնարկներում նրան չեն ճանաչում, թե ինչ մարդ է, թե վորքան կարելի յե նրան հավատաբ: Յեկ շատ չարչարանքներ կը քաշի միայնակ տնայնագործը մինչեւ վոր կը կարողանա իր լարեխիղճ և պարտաճանաչ լինելը հաստատել:

Յեզ նեղանալ ել չի կարելի: Միությունն ել, պետական ձեռնարկն ել պատասխանատու յին իրենց բաց թողնված հում նյութի համար և չին կարող սիսկ անել:

Այժմ վերցնենք արտելը՝ Աւրիշ բան և տալ իր անդամին, վոր և փայ և մացրել, և պարտականություններ և վերցրել իր վրա, և մյուսների համար և պատասխանատու։ Միայնակ անայնագործին վարկ ըաց թողնելու խնդրում, սակայն, հենց այդ էսկ արտելը կտատանվի՝ տանը թե վոչ։ Ի՞նչ վերցնել նրանից։ Նրա զիմաց արտելն ինքն և պատասխանատու։ Բացի այդ, արտելի անդամներն ել կրտանձան։ Խակ յեթե միայնակ-տնտեսագործն ըստացած հռում նյութն ել չվերադարձնի, այն ժամանակ արդեն գործը իսայտակության հիսանի, ել ինչի համար պետք է վարչությունն իւ վրա վերցնի պատասխանատվությունը և անգամների մեջ ել զգգուհություններ առաջ բերի։

Կարծում ենք, վոր հում նյութեր ստանալու որինակից եւ միայնակ տնայնագործի համար հասկանալի յեն արտելային աշխատանքի առավելությունները:

Արտելը բարձրացնում է աշխատանքի վորակը

Միայնակ-անայնագործը բոլոր գործվածքներն ինքն և շինուամբ սկզբից մինչև վերջը։ Այդ ձեռնատուչե։ Տնայնագործը ստիպված է գործից կտրվել, այս կամ այն գործիքին անցնել, ստիպված է գործից ընթացքում աշխատանքի մի ձերից մյուսին անցնել։ Իսկ զրա վրա անողութ կերպով ժամանակ և ծախսվում է, փորձվելով աշխատանքի շատ ձեռքի մեջ, անայնագործը յիրրեք էլ չի համուռմ այնպիսի արագության, ինչպիսի արագության նա կհասներ, յիթե շարունակ գործի մի փորոշ մասն աներ։

Վերցնենք կոշկակարական արհեստը: Ամեն մի վարպետ չի կարող ձև անել: յեթե նա այդ գործն ել և անում—այդ դեպքում դանդաղ և աշխատում և սխալներ անում: Խոկ փորձված ձև անողը մի անգամ նայելուց հասկանում է, թե ինչպես պետք է կտրել կաշին, վոր իզուր տեղը կտորները չկորչին և վոր ամբողջը մինչև վերջ կարելի լինի գործածել: Նրա ձեռքը հաստատ և համողված և աշխատում:

Զեած պատրաստի կոշիկի կարելն ել նույնպես կարելի յեզանագան մասերի բաժանմել որինակ մեքենայի վրա կարելը, պատոշին ամրացնելը և այլն։ Այդ գեպբում կոշիկն անցնելով մի տնայնագործից մյուսին, ամեն մեկի ձեռքում կարճ ժամանակ և մնում և ավելի գեղեցիկ և դուրս դալիս։ Մեքենայի ասկ նստած վարպետը կարեք չունի դործից կտրվելու և վեր կենալու մեխ կամ մուրճ վերցնելու պատոշին ամրացնելու համար, — նաև մի դործով և զրադշում շարունակ — կարել մեքենայի վրա։ Իսկ պատոշը խփողին հարկավոր չե մեխերից և մուրճից կտրվել և մեքենայի տակը նստել կար անելու։

Առաջին հայտցըից այս բոլորը կարծես թե մասր-մուսր քանիք են, բայց աշխատանքի մեջ դրանք միծ զեր են խաղում, թե գործվածքի պատրաստելն են արագացնում և թե լավ տեսք ու հատկություն տալիս նրան: Սակայն, աշխատանքի բաժանումը հնարավոր և միայն արտելային կարգով գործելուց և ավելի հաջող և գնում բնիշանուր արհեստանոցում:

Այսպիսու, որինակ վելիկոսիլյե զյուզի կոչկարսների արտեհուն աշխատում են բնդճանուր արհեստանոցներում, առաջին

արտելում ընդունված և աշխատանքի բաժանումն: Ամեն մի դույզ կոշիկ անցնում է 12 ձեռքից: Կոշիկները շուտ և միասին ակ են գուրս գալիս: Ամբողջ ապրանքն ստացվում է մաքուր:

իսկ ի՞նչը զրդեց տնայնագործներին ընդհանուր արհեստանոցներ հիմնել: Լսենք, թե ինչ են զրում տեղերից այդ մասին:

«Տնայնազործը և արտելը» թէրթի № 14-ում Ա. Սկվարցովը

զրաւմ ե՞ «Յերբ տնայնագործներից ամեն մեկն ինքնուրույն և առանձին եր աշխատում, այդ ժամանակ նրանք տարբերություն չեցին տեսնում իրենց շինած գործվածքների միջև, բայց յերբ արտել կազմեցին և իրենց պատրաստածները սկսեցին հանձնել մի պահեստի, այդ գեղքում արտելի վարչությունն ել, իրենք տնայնագործներն ել տեսան, վոր կոշիկների մի գույքը լավ եկարված, իսկ մյուսը՝ վատ: Ենք դրա պատճառն այն չեր, վոր մեկն ավելի լավ եր աշխատում, իսկ մյուսը՝ վատ, վոչ, պատճառը միայն այն եր, վոր մեկը բարեխղճությամբ, առանց շտապելու յեր աշխատում, իսկ մյուսը վսագում եր շուտ վերջացնել և շուտ դրամ ստանալ:

Իսկ վերջի վերջո, յերբ վոր կոխիլ-դավիթ անելուց հետո, վարչությունը համաձայնվում էր ցածր տեսակի գործվածքներն ել վերցնել—միությունը կամ հիմնարկներն այդ ապրանքները բրակեցին անում: Հարց և առաջ գալիս—ի՞նչպէս անել այդ չարեփեց ազատիլու համար: Յեկ արտելը գալիս և այն մաքին, վոր միայն մի յելք կա—աշխատել ընդհանուր արհեստանոսում:

Բնդէանուր արհեստանոցում չի կարելի մի մատերիալի փոխարեն մյուսը գործածել ընդհանուր արհեստանոցում աշխատանքները կտարավում են մասնագիտ-հրահանգիքների հսկողության և զեկավարության տակ. հրահանգիքներն ոգնում են արտելի աշխատանքներին:

Ուրիշ արտելների մեջ միացած անայնագործներն ել նույն հետևանքներին են հասնում, ինչ վոր զրում է ըսկի. Սկզբացովք: Մշակման արագությունը և բարձր հասկությունը անայնագործներին դեպի արհեստանոց են քաշում: Տնայնագործների վախճայիկ արհեստանոցներից կամաց կամաց վերանում ե: Էնդ հանուր արհեստանոցների տված ոգու երի տված օգուտներն են եւ սակայն, միայն արտելին են մատչելի, իսկ միայն ակտնաց ակտնաց այս գործն այդ ոգու ծն այդ ոգուտներն են եւ առաջին չեն կարող:

Արտելային աշխատանքը լավացնում է գործվածի նաև
կուբյունը

Ըսդհանուր և սժանդակ արհեստանոցները վոչ միայն արա-
գացնում են աշխատանքը, այլև ոգնում են լավ հատկության-
հասնել: Ինչու Միթե անայնազործը չի կարող իր տանն ել բա-
րեխղճությամբ աշխատել լավ հատկության գործվածքներ շինել:
Կարող ե, բայց վոչ միշտ և վոչ ել ամեն արհեստում: Փայտի-
չորացնելը, մանածի ներկելը, կաշվի մշակումը և աշխատան-
քի մի շարք այլ կողմերը հատուկ հարմարություններով սար-
քավորած շնչքեր են պահանջում:

Տնայնազործի աշխատանքի վատ վորակը խըրտնեցնում ու-
քում և զնորդին: Յեկ պետք ե տսել, վոր շատ հաճախ զնորդին
արդար և լինում, գերադասելով գործարանային ապրանքները:

Շատ անայնազործներ աշխատում են ենպես, մի կերպ, մի-
այն թե ծախեն, իսկ հետո—ինչպես կասեն՝ «զնա ու ծայրը գտիր»,
խո նշանները չեն մնացել, թե վորտեղ ե պատրաստված: Վատ
գործ անողների պատճառով տուժում են և բարեխղճանա-
գործները: Ճիշտ ե, նշանները չեն մնում, բայց համբավը տա-
րածվում ե բոլոր տնայնագործների մասին՝ թե
անայնազործական իրերը վատ են, չառնեք և այլն:

Լավ նաևկուբյան ապրանքը շուկա յի նվաճում

Այս հիշել միշտ ել ոգտակար ե: Այդ պատճառով ել արտելը
միջոցներ ե ձեռք առնում, վոր նրան շշփթեն անրարեխղճան տը-
նայնազործների հետ: Նա իր կնիքն և զնում իր շինած իրերի
վրա, թե այսինչ արտելն ե պատրաստել: Յեկ արտելի պատիվը
բարձրանում է: Մարդիկ ընտելանում են, վոր այսինչ արտելի
գործն իսկական զործ ե, խարեցայություն չկա այդտեղ և խոր-
դուրդ են տալիս ուրիշներին զնելու այդ արտելից: Բարեխղճան
միայնակ անայնազործն անգամ այս պայմաններում աչքից դուրս
կմնա: Շատ ծիծագելի կլիներ, յեթե իր կարած մի քանի զույգ
կոշիկների վրա նա իր պազանունը զներ: Դրանից նա վոչ մի ո-
գուշիկների վրա նա իր պազանունը զներ: Դրանից նա վոչ մի ո-

նացածներին: Մնացածներին ստիպված պետք ե լինի մերժել վո-
րովհետեւ ուժերը չեն ների:

Միայն արտելային աշխատանքն ե, վոր կարող ե բարե-
խղճան անայնազործին ոգնել զնորդներ զբավելու: Միաբ ու-
նի, վոր արտելն իր պատրաստած ապրանքը պարտիայով տանի
զնորդին հասցնի, այնական, վորտեղ նա ապրում է: Միասին, ար-
տելով աշխատելուց հաջիվ կա կազմակերպել ընդհանուր կամ ո-
ժանդակ արհեստանոց և արհեստանոցում գործ ածել շարժող մե-
քենաներ:

Արտելի միջոցով տնայնազործի արտադրության մեջ են
մենամ շարժող մեթենաներ

Մեքենաների ոգտավետության մասին կարիք չկա յերկար
խոսելու: Կարձ կարելով՝ ինայլում և աշխատանքը, բարձրանում
և գործվածքների հատկությունը, բարձրանում և արտադրողա-
կանությունը, պահպանվում և անայնազործի առողջությունը:

Բարենկայի տնայնազործները հասկացել են շարժող
մեթենաների ոգութը


*1904 թվի վերջին Մուկվայի նահանգի Բարինկա գյուղում
կայացալ անայնազործական արհեստաների կարիքները բավարա-
րելու համար կառուցված ելեքտրակայանի հանդիսավոր բացումը:
Բացման օրն իսկ պարզվեց թե ինչ մեծ նշանակություն ունի
ելեքտրական ուժը անայնազործության մեջ:*

Նավթի ճրագը ժլատ լույս եր տալիս դադարենք վոտքով
դանդաղ պարտող և մեջքից կորացած ծերուկ անայնազործին, իսկ
նրա կողքին, ծերուկի վորդին, ելեքտրական պայծառ լույսի տակ
ազատ և ուղիղ կանգնած եր զազգահի մոտ: Վըժժում եր մոտորը:
Կարիչի ատկից զուրա ելին զալիս ուղիղ կարված վուկրեն խզար-
ները:

Ինչպիսի շարժիչ մեթենաներ են աշխատում տնայնա-
զործների լուս

Դրանք փոքրիկ չափերի և ժամանակին ելեքտրական մոտորներ
են: Մեկ ձիու ուժ ունեցող մոտորն արժե մոտ 150 ոուրլի 6
ձիու ուժ ունեցողը՝ մոտ 300 ոուրլի: Սովորական անայնազոր-
ծական զազգահների համար հարկադրված են մեկ յերրորդականից

100/3
30822



մինչև մեկ ու կես ձիու ուժ ունեցող մոտորների Արտելների և
միությունների միջոցով կարելի յե ստանալ այդ շարժիչները
մաս-մաս վճարելու պայմանով կամ թե վարկով:

Շարժիչ մեքենայից հետո արտել ե գալիս
Ելեքտրականությունը

Հարմար ելեքտրական մոտորները շարժման մեջ գնելու հա-
մար ելեքտրական ուժ և հարկավոր: Մի քանի արտելներ այդ
հոսանքը ստանում են մոտակա զործարաններից: Բայց ամեն
տեղ զործարաններ չկան: Յեկ արտելները սկսում են ինքնուրույն
ելեքտրական կայաններ շինել:

Որինակ նովոգորոդսկի նահանգի Վալդայի գավառի հյուս-
վածքներ գործող տնայնագործների ընկերությունն ունի իր ե-
լեքտրակայանը: Մյու կայանից ոգտվում են արտելի գարբնոցը,
փականագործական և ներկարարության արհեստանոցները, ձյութի
գործարանը և աղացները և, բացի այդ, 17 գյուղերում այլև
վոչ թե նավթե ճրագ-փուտներն են մուխ անում, այլ ելեքտրա-
կան լամպոչկաններն են իրենց պայծառ լույսը սրվում: Բայց ըն-
կերությունը ղրանով չի բավականանում: Արտելականները մտա-
ծել են մի մեծ գործ, նույնիսկ վոչ թե մտածել, այլ արդեն ըս-
կսել են այդ գործը՝ ջրանցքներ են փորում, հողն են ամրացնում
Շչեգրինկա զետը Բորովինի լճի հետ միացնելու համար: Շուտով
կրաքարացվի նոր հիգրո (ջրածին) ելեքտրակայան, կղրվեն ուժիղ
շարժիչներ-տուրբիններ և ելեքտրականությունը մուտք կը գործի
այնտեղ, վորտեղ դեռ մինչև այժմ չեր յեղել կլուսավորվեն
մութ անկյունները և նոր գործարանների ու արհեստանոցների
ակները կսկսեն պատվել՝ արագացնելով և հժանացնելով արտա-
գրությունը:

Իսկ յեթե Բորովինսկի գավառակի տնայնագործները շարու-
նակեյին առանձին-առանձին, աշխատել, ամեն մեկն իր խրճիթի
մեջ կուչ յեկած, նրանք յերբեք ել չեյին կարող յերազել, թե
կունենան իրենց ելեքտրակայանը և յերը և իցե կարող կլինեն
աշխատել ելեքտրական մոտորների ողնությամբ: Յեկ ամեն տեղ
միայնակ տնայնագործներն իրենց մեջքերն են կորացնում միայն,
ձեռքերը կրշաբերի մեջ թաղում, և չեն կարողանում մի վորեն
բարիք ավելացնել տանը, տնտեսության մեջ:

Միայն ընդհանուր արհեստանոցում կարելի յե առողջ
աշխատել

Դժվար չե համոզվել վոր ընդհանուր արհեստանոցն առող-
ջություն և մտցնում աշխատանքի մեջ միայն պետք և զիտել իր
խրճիթում գործ անող տնայնագործի աշխատանքը: Պայծառ որի-
նակ կարող են ծառայել բրդի զործվածքներ շինող մեր տնայ-
նագործները: Կեղառու բուրդը գլում են սենյակում և լվանալուց
հետո փուռմ նույն տեղը և գոլորշին լեցվում և այդ սենյակը:
Բայց այդ գետ քիչ և – չորացնելուց հետո գլումում են սանդերքի
վրա կոպացած զիրքով, այլտեղ ել մի կողքին թափվում և բութը,
իսկ մյուս կողքին դարսվում են վաթիլները: Բրդի վնասակար
մասնիկներն ու փոշին, լեցվում են ողի մեջ: Հենց այդ-
տեղ ել վագվզում են յերեխանները, այլտեղ ել ուտում են,
խմում և քնում: Յեկ այդ բոլորի հետևանքով բուրդ մանող տը-
նայնագործների մեջ զարգացած և տուրերկուլյողը (թոքախտ) և
թունագորված են նրանց մարմինները:

Մյուս բոլոր արհեստաններն ել վնասակար են, յեթե անայնա-
գործն աշխատում և նույն շինքում, վորտեղ և ապրում ե: Միայն
ընդհանուր արհեստանոցն և աղատում ընակարանը վնասակար
փոշուց և գոլորշիացումից, կեղակից և աղտոտությունից: Տնայնա-
գործը պահպանում ե վոչ միայն իր ընտանիքի, այլև իր առող-
ջությունը, վորովհետեւ ընդհանուր արհեստանոցում կարելի յե
շինել հարմարություններ փոշին դուրս քաշելու համար կամ այն-
պիս հարմարեցնել ընդհանուր շինքը, վոր աշխատանքի ավելի
վնասակար մասներն առանձնացված տեղերում կատարվեն:

Միայն արտելային աշխատանելով կարելի յե մեծացնել
վանառանումը

Միայնակ-աշխատող տնայնագործին գանելը, նրա հետ գործ
ունենալը գժվար ե, վոչ մի հաշիվ չկատ ժամանակ կորցնել նրան
վնարելու համար, զբամ ծախսել կանխավճար տալ կատարյալ
հույս ունենալով, թե անայնագործն ել իր պարտականություն-
ները կկատարի և այդ բոլորի զիմաց հանկարծ տեսնել, վոր
տնայնագործը հրաժարվում է ժամանակին հանձնել գործվածք-
ները – շատ հեշտ ե: Դա շատ պատճառներից կարող և սռաջա-
նալ՝ կամ սնայնագործը կհիվանդանա, կամ մի ուրիշն ավելի
բարձր գնով պատվեր կտա նրան:

Իսկ արտելին շատ հեշտ է գտնելը, նա հայտնի յեւ ամբողջ հանրապորության մեջ։ Իր վեցըրած պատվերը նու կկատարի։ Յեթե արտելի մեկ կամ մյուս անդամը չէինի ել գործվածքների իրեն հասնելիք քանակը, մնացյալ անդամները կլրացնեն նրա փոխարեն։ Այս պատճառով պետական հիմնարկները և կոռպերացիան ավելի մեծ ցանկությամբ են պայման կնքում արտելի հետ։ Պայմանագիր կնքելուց հետո տնայնագործն առանձով է, վոր շարունակ պատվերներ և ունենալու, զնորդներ փնտրելու, հոգան ընկնում և նրանից, տնայնագործը չի վախենում, թե իր պատրաստած գործվածքները չեն վաճառվի։

Իսկ յերբ արտելը մտնում է արտելների միության մեջ
վերեվում բված բոլոր ոգուտներն ել ավելի
յեն մեծանում

Արտելների միության մեջ մտնելուց տհայնագործները նոր ովուտներ են ստանում: Յեթև միությունը կազմված է մի գավառում գտնվող արտելներից, այդ գեպքում տնայնագործները կարող են գավառի տնայնագործական ապրանքների ամբողջ շուկան գրավել այնպիս, ինչպիս նրանք ազատվում են տեղական չարչի առևտրականներից արտել կազմելով:

Նահանգական միության մեջ մտնելը հնարավորություն ե տալիս ազատվել միջնորդներից ամբողջ ն ա հ ա ն գ ի ս ա հ մ ա ն ն ե ր ո ւ մ: Նահանգական միությունը հնարավորություն ունի տնայնագործների պատրաստած ապրանքները տեղափոխել զեղի նահանգի բոլոր մասները—այսուեղ, վորտեղ զրանց կարիքն են զգում: Դրանից բացի, այն խոշոր կազմակերպությունները, վորոնց տնայնագործական ապրանքներ են հարկավոր, միշտ ել նահանգական միությանը կղիմեն, վոր բոլորի աչքի տուած և վորին վնատրելու կարիք չկա: Նրան կղիմեն և զյուղատնտեսական կոռպերացիան, և սպառողական ընկերությունները, և զանազան նահանգական կազմակերպությունները: Նահանգական միությունը կարող է ավելի մեծ վարկ ստանալ քան արտելը: Ունենալով իր կազմի մեջ մի քանի միատեսակ արտելներ, նահանգական միությունը հեշտությամբ կարող է կազմակերպել կիսագործվածքների արհեստանոցներ: միությունն ավելի հեշտ կպաշտպանի և տնայնագործի իրավունքները:

Ի՞նչ է արտելիւրի վիոքյունը

Արակը միացնում և միայնակ-տնայնագործներին: Միությունը համախմբում և արտելներին: Արտելները լիազորներ են ընտրում այն համազումարի համար, վորտեղ ընտրվում են Միության վարչությունն ու վերաստուգիչ հանձնաժողովը: Հետեապես միության մեջ ել հենց իրենք տնայնագործներն են աշխատելու մնացյալ բոլոր տնայնագործների ընդհանուր շահի համար: Ունենալով մեծ շրջանառություն, մեծ վստահություն և միջոցներ, արտելների միությունը կարող է մասնագեաներ հրավիրել աշխատանքը լավացնելու համար, կարող է ազատել առանձին արտելներին նրանց նեղն ընկած դեպքում, ուժեղացնել վաճառահանումը:

Միությունները մտնում են արտելային աշխատանքի համար միացնում են գործականացնելու մեջ և առաջնային դեր ունեն աշխատանքի մասին պատճենագիր պահպանության բարության մասին պահպանագործներին։ Իր համաժկությունական կինտրոնի միջոցով տնայնագործը վերջնականապես ամրացնում է իր միությունը մի ամուլք միաձույլ որգանիզմի (մարմիի) մեջ, վորի ուժը միանգամայն բավական է չարչեական կաղթելու, տնայնագործի աշխատանքը լավագնելու և վաստակը բարձրացնելու համար։

ԳԼՈՒԽ V.

ԱՊԱ Ի՞ՆՉՈՒ ԴԵՌ ՀԱՃԱԽ ԱՌԵՎՏՐԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ԶԱՐՁ-
ՆԵՐԸ ԱՐՏԵԼՆԵՐԻՑ ԱՌԱՋ ԵՆ ԳՆՈՒՄ

Գյուղակամ կա արտել և հենց զբա կողքին փառավորապես
ապրում է նաև չարչի-տոհտականը: Գոյություն ունեն շրջանա-
յին նահանգական միություններ, իսկ քաղաքներում և գյուղե-
րում վիտում են տոհտականները: Դրանց ձանկերից չի փրկում
նույնիսկ Արտադրական կոռպերացիայի համար:

Խսկապիս զուցե անհնարին է ապրել առանց սկուպչիկի (միջնորդ առեվտրականի)

Գուցե իրոք, տնայնազործը չի կարող արեի շող տեսնել առանց զանազան չարչի-տուետրականների։ Գուցե և իզուր են նըրանց վրա հարձակումներ գործում։

Միթե չի պատճեռում, վոր տնայնազործն իր արտադրանքն արտելին կամ միությանն և առաջարկում, իսկ այստեղ ել են ասում «փող չկա, պահանջ չկա, չեն վաճառվում», և հրաժարվում են ապրանքն ընդունել կամ թե առաջարկում են սպասել վաճառելուց հետո ստանալ փողը: Իսկ յերբ նույն ապրանքը արտելից կամ միությունից ացայնագործը տանում և չարչի-առերավականի մոտ, վերջինս վերցնում է ասանց յերկար բարակ խոսելու: Ճիշտ ենա դրոշներ և վճարում, բայց տնայնագործը տուն և վերագունում գոնի մի քանի գրոշներով:

Առուջին հայացքից անհասկանալի մի շփոթ և ստացվում: Արտելային ուժերով և միության միջոցով վաճառահանման ոգուում նման և գառնում ողի մեջ ազատ թուզող կաքավի, իսկ սկրովշիկը, չնայելով նրա բոլոր գծուծությանը, նազդ, ձեռքի մեջ գտնվող մի բաղեցի:

Ի հարկե կաքավն ավելի լավ և, քան բաղեն, բայց արդյոք տնայնագործը կարող է բռնել նրան: Սրանից հետո հաշիվ կաքավեցից հրաժարվել:

Անա, հենց այստեղ և, վոր իր քթից դենը չտեսնելով և վաղվան մասին չմտածելով, սայդաքում և անդիտակից տնայնագործը:

Այդպես զատելով նա ինքն իրեն միջնորդ առերավականի թաթերի մեջն և գցում: Իսկ յեթե ուշի ուշով քննելու լիենք, թե ինչու չեն վերցնում արտելը կամ միությունը և ինչու յե վերցնում չարչին, այդ ժամանակ կպարզվի թե ինչ պառուղ և այդ բաղեն:

Տեսնենք թե ինչ պատճառով ե չարչին վերցնում

Ամենից առաջ պետք է տսել, վոր չարչի-առերավականն ել միշտ չի գնում ամբողջ ապրանքը: Նա հիմար չեւ և հարմարվում է շուկային: Իսկ յեթն առերի քյասաղության ժամանակն ել առնում է, ապա նա այդպիս և անում հաւաս ունենալով, վոր կը սպասի մինչեւ լավ ժամանակը և այն դեպքում իր վճարածի կը ըստավիկը հետ կը երի: Քյասաղ ժամանակներին ապրանքն առնելով նա ճգմում և տնայնագործին գնի մեծ, իմանալով վոր միենույն և տնայնագործը ճար չունի, առանց փողի չի կարող ապրել: Իսկ հետո, յերբ մեծանում է ապրանքի պահանջը, նա յերկուորդ անգամն է ոգտվում, այս անգամ ել իր գնորդից, — նույնպիս:

Համոզված լինելով, վոր գնորդն ապրանքի կարիք զգալով կանոնի առնի ավելորդ կոպեկների առաջ:

Արելը յեվ միուրյունը

Զեն վերցնում վորովհետեւ նրանք չեն կարող գնալ չարչի-առերավականի ճանապարհով, չեն կարող ոգտվել վաճառքի ժամանակավոր թուլությունից և տնայնագործին խեղել, նրա արյունը քամել: Հակառակ զեպքում, արտելն ել տնայնագործի համար մի յերկրորդ չարչի կդառնաւ կփոխվի մի ցուցանակ բայց զբանով լեզնի աղուից քաղցր չի: Տնայնագործի համար վոչ թե ցուցանակն և կարեոր, ոյլ այն, թե նա ինչ կատանաւ իր կազմակերպությունից—կպահպահնից արդյոք նրա վաստակն այդ կազմակերպությունը, թե վոչ:

Այս պատճառով արտելն ու միությունը, միջոցներ ունենալուց, վճարում են արդարությամբ և հաշիվ չունեն անայնագործի նեղ դրությունից ոգտվելու: Իսկ յերբ միջններ չկան, արտելը կամ միությունը ուղակի ասում են՝ «այժմ մենք դրամ չունենք և քո արտադրանքի համար պահանջ ել չկա: Յեթե ցանկանում ես կվերցնենք քո արտադրանքը և կաշւատենք վաճառքի տեղ գտնել, բայց արժեքը ստանալու համար դու պետք և սպասեա: Տնայնագործն իր կազմակերպությունից ուրիշ պատասխան չպետք և սպասի: Գործը պարզ և մաքուր պետք և դրվի, առանց իսարերայության և առանց մի վորեն անիրազործելի խոստումների: Գործի սկզբին անայնագործի ողուալը պահանջում է, վոր նա իր արտադրանքները արտելին տա առանց պահանջելու, վոր անմիջապես վճարեն, ի հարկե այն զեպքում յերբ արտելը միջոցներ չունի: Լավ և մի առ ժամանակ սպասել, մինչե վոր արտելը ծախի արդ արտադրանքը, քան թե կես գնով տալ միջնորդ-առերավականին: Տնայնագործական արտադրանքների վաճառքն ընդհանրապես ապահովված է: Ապրանքի պահանջն այնքան մեծ է, վոր գործարանները չեն կարողանում հասցներ: Տնայնագործը բավականին մեծ ասպարեզ ունի աշխատելու համար: Միայն նրա արտադրանքների վաճառքն է, վոր հարթ չի զնում՝ այսոր—շատ, վաղը—քիչ: Այդ աչքի առաջ ունենալով, անայնագործը պետք և մասնավորի հակառակ կողմին ուժ տա, ձգտի արտելն ապահովել սեփական միջոցներով, վորպեսի վաճառքի թուլանալու զեպքում նա գծվարությունների մեջ չընկնի: Բայց կարցնեն՝ արդյոք կա-

բաղ և տնայնագործը խնայողություն անել սկ որվա համար: Մի պատասխան կա դրան՝ արտելային կարգով աշխատելուց միանգամայն կարող է:

Ինչպես լավ աշտեների գործն ե ցույց տվել, համարյա թե իրենց համար բոլորովին աննկատելի կերպով, անայնազործները կարողանում են արտելային մեծ գումարներ կուտակել: Այդ դրամագլուխներով արտելը հանում ե տնայնազործներին նեղ վիճակից: Իսկ ինչպես են հավաքվում այդ դրամագլուխները:

Ամենից առաջ—փայերը

Արտելի յուրաքանչյուր անդամը պետք է փայ մուծի: Յեթե նա չքավոր է կամ նեղ որում ե փայը մուծվում ե մաս-մաս Շատ չքավոր տնայնազործների համար փայն ընդհանրապես մուծում են դյուզփոխադարձ ոգնության ընկերությունները: Այդ փայադրամներով ել արտելը գործ ե սկսում: Յեթե անդամները խուսափեն փայը վճարել մեկը՝ մյուսի վրա զցելով,—սկզբից կարելի յե ասել վոր այդ արտելից վոչինչ դուրս չի դա: Նա միջոց չի ունենա բարձրանալու: Այդպիսի արտելին վոչ վոր չի հավատա, նրա մասին կասեն, և շատ ճիշտ կասեն, արտել չե այլ թալանչիների մի խումբ: Ինչ վոր չը զնես այդպիսի արտելի մեջ, բոլորն ել ցրիվ կտան: Փայը վճարելուց խուսափելով տնայնազործը կտրում ե այն ճյուղը, վորի վրա ինքն ե նստած: Փայերը հավաքելով, արտելը կարող է գործի անցնել և ահա հենց այդ ժամանակ ել սկսվում ե սեփական միջոցների կուտակումը:

Հատկացաւմներ ապրանքի վաճառքից

Սպառելով տնայնազործների արտադրանքը ստացված գումարների մի մասն արտելը հատկացնում է ծախքերի համար: Հատկացումների չափը վորոշում են իրենք տնայնազործներն ընդհանուր ժողովրւմ: Հատկացումների մի մասը դորձադրվում է ծախքերը ծածկելու համար, իսկ մյուս մասը մնում է արտելում: Այդ հատկացումներն որեցոր կուտակվելով տարվա վերջին մի լավ գումար են կազմում: Հաճախ տնայնազործները խոսում են թե արտելը մեծ տոկոսներ ե պահում: Փետք ե ինչպես հարկավորն ե համեմատել և տեսնել թի տնայնազործը յերբ եր շատ վերջում—արտելից, թէ չարչուց: Յեթե արտելից քիչ ե ստանում

ապա գործը վատ ե և պետք է ինչպես հարկավորն ե քրքրել արտելի ծախքերը, իմանալ թե ուր են զնում միջոցները: Յեթե շատ ե ստանում, հենց այդպիս ել լինում ե ամեն մի արտելում ապա ի զուր ե և կարիք չկա գանգատվելու հատկացումների դեմ: Վերջի վերջո կը կնակի ողություն ե ստացվում: Տնայնազործը բարձրացնում ե իր վաստակը և, բացի այդ, կուտակվում են ընդհանուր միջոցներ սկ որվա համար: Յեթի արտելը չիներ չեր լինի վոչ մեկը և վոչ ել մյոււլը:

Արտելի միջոցով տնայնազործներն իրար փախադարձ ոգնություն են ցույց տալու համար:

Վերջին ժամանակներս արտելներում հատուկ դրամագլուխներ են հավաքվում տնայնազործների հիվանդության կամ անտեսության մեջ անհետածգելի կարիք ունենալու ժամանակն ըրանց ոգնություն ցույց տալու համար: Իսկապես միայն փաճառքի թուլությունից չե վոր տնայնազործը ծանր հարվածներ ե ստանում: Լավ փաճառքի դեպքում ել հիվանդությունն ե վաստակից զրկում նրան: Նա ստիպված է լինում կամ իր գույքը ծախել և կամ թե անձեռնտու պայմաններով պարտք վերցնել: Ընտանիքի անդամների հիվանդությունն ել ե ավելորդ ծախքեր պահանջումք վորի համար տնայնազործի միջոցները կարող են բավականություն չտալ: Բացի այդ միթե քիչ ե պատահում, վոր տնայնազործը այնպիսի սուր կարիքներ ե ունենում, վոր մի վորեն տեղից, թեկուղ գետնի տակից, պետք ե միջոցներ գտնել:

Յեկ ահա վրա յեն հասել այն ժամանակները յերը հնարավոր ե ոգնություն ստանալ հիվանդության, հաշմանդամության ծերության, գործազրկության և նման նեղ բովեներին:

Արտելները և միություններն արձագանքելով այդ հասունացած պահանջին, սկսել են փոխ պար ու ու թյան գանձ ար կ զ ն ե ր հիմնել իրենց անդամների համար:

Ի՞նչ ե փոխադարձ ոգնության գանձարկոր

Փոխողնության գանձարկոր աշխատում է առանձին կանոնադրությամբ, ունի իր զրամագլուխները, վորոնք առանձին են արտելի զրամագլուխներից: Մանելով փոխողնության գանձարկոր միջոցների իրավունքներով յուրաքանչյուրն իր վրա պար-

տավորություն և վերցնում իր ամբողջ վաստակի մի վորոշ տոկոսը (8 կամ 10 լ.) հատկացնել փոխոգնության ընդհանուր գանձարկղին: Այդ նույն գանձարկղին և հատկացվում և արտելի ստացած ոգուտների այս կամ այն մասը:

Արտելի անդամի ճիշճանդության, գործազրկության, հղիության, նորածիններին կերակրելու կամ ոժտելու, հուղարկավորության կամ ուրիշ գժբախտության դեպքերի և ծերերին կամ հաշմանդամներին կենսաթոշակ տալու: Համար գանձարկղից նպաստներ կամ վարկեր են տրվում:

Փռխոգնության գանձարկղները հոգ են տանում ձրի բբժշկական ոգնություն ցույց տալու համար:

Փոխոգնության գանձարկղներ կազմակերպվել են Խ. Միության բոլոր քաղաքներում և շատ լավ աշխատում են: Դրանց անդամների թիմն աճում է և մեծանում են գործարքները:

Վաճառականը հոգ կտանիք արդյոք անայնագործի մասին: Այդ միտքը նրա զլուին ել չի զա բոլորովին նա ինչու պիտք ե ոգնի տնայնագործին: Գործազրկին ամենահամեղ և մատչելի մի վորա և շահ քամելու համար: Ել ինչու ողնել ճիշճանդացած տնայնագործին,—նրա փոխարեն շատ կզտնվեն առողջները, Յեկ այդպես և ամեն քայլափոխում:

Զարչի-առենտրականից ստացված բովեական ոգուտն ուղղակի վասա և դասնում: Այդ ոգուտը կեղծ և և իսկապես միայն կարիք և ծնում:

Արտելը յեվ միուրյունը միշտ ել ոգտավես են չարչու նետ համեմատելով

Ի հարկե այն արտելը, վորի անդամները գիտակից են, հասկանում են իրենց շահերը և պաշտպանում ընդհանուր գործը: Իսկ այն արտելը, վորի մեջ աշխատողներից վոմանք նալին են խփում, իսկ վոմանք ել մեխին—այդ արտելից ոգուտ չի կարելի սպասել: Այսպիսի առտելից վոչինչ գուրս չի զա, բացի հայհոյանքից, կը ուիմներից և կոռպերատիվ աշխատանքները մեղաղբելուց: Ցամաք այն ե, վոր բուլորը չեն հասկանում այդ: Յեկ իրենք չկարողանալով կարգի գցել աշխատանքները, մեղաղբոներին ուրիշ տեղ են վնատրում: Կողոպտողներին տեսնելով արտելային աշխատանքից հեռաւ յեն փախչում և միայնակ-տնայնագործները:

Զոկիր մեկն ու մելոր

Կյանքն ամեն որ պահանջում և յուրաքանչյուր մի տնայնագործից մեկոն ու մեկը զոկիր՝ կամ հենց այժմ ստանալ գրողներ և մշտապես կաշկանդված, ծանը աշխատանքների մեջ մնալ կամ թե համառ և տոկուն կերպով պաշտպանել իր վաստակը ու զրա համար միանալ ընդհանուր գործի մեջ: Դիմանալ ծանը ժամանակներին, չեղզվել ճանապարհից և միջնորդ-առևտրականի մոտ տանող ուղին չըսնիլ կարող և միայն այն տնայնագործը, վոր պարզ գիտակցում ե, թե ինչ պայմաններում են վաճառվում նրա արտադրանքները, վոր գիտե թե յերբ և ովքեր են զնում այդ արտադրանքները: Պետք և իմանալ վաճառման պայմանները թե յերբ և թուլանում, զաղարում վաճառքը և յերբ նորից ուժեղանում, այս բոլորն իմանալով անայնագործը կարող և նախապատրաստվել և գործի քյանագություն առաջանալուց հանկարծակի չգալ, արտելին չմեղագրել:

Ովքեր են զնում Տնայնագործական արտադրանիները

Տնայնագործական արտադրանքները գնում են բանվորները, գյուղացիները և ծառայողները, վերցնենք ծառայողներին և բանվորներին, — նրանց վաստակը կախված և այն բանից, թե ինչպես են աշխատում գնրծարանները: Իսկ գործարանների աշխատանքը շատ կողմերով կախված և գյուղատնտեսության վիճակից:

Աշխան հացը հավաքելուց հետո գյուղացին կտարում և գլխավոր գնումները: Գարնանը շատ գյուղացիներ պատրաստ են իրենք վաճառելու համարյա թե մինչև վերջին ունեցածները և վոչ թե մի վորեն բան զնելու:

Ապրանի զինը, հատկությունը յեվ պահանջը

Աշխատավորի համար ամեն մի կոպեկն ել թանկ ե: Միայն սուզ կարիքի գեպքումն և նա զնում այս կամ այն իրը: Տնայնագործն այդ գիտե իր փորձից: Նա ինքն ել չի գնի, յեթե ապրանքն իրեն հարկավոր չի: Իսկ առնելուց նա մեծ ուշաղրություն կը դարձնի նաև ապրանքի հատկության վրա, — տասն տնգամ կդիտի ամեն կողմից և մի լավ բազար կանի և կվորոնի թե արդյոք մի ուրիշ տեղ ավելի եժան չեն տա: Տնայնագործական արտադրանքների յուրաքանչյուր մի զնորդ ել ճիշտ այդպես և վարդում:

Քաղաքային տնայնագործը յեվ գործարանները

Վոչ միայն նյուղական տնայնագործների արտադրանքներն են շուկա գալիս, այլ և քաղաքի տնայնագործներինը և գործառանայինը, Գնորդը ջոկելու շատ բան ունի:

Յեթե քաղաքային տնայնագործների կամ արդյունաբերության ապրանքներն են և հատկությամբ ավելի լավ, ապա դժվար թե գտնվի այսպիսի մի հիմար, վորոն ավելորդ գումարներ վճարի վատ ապրանքներն: Պարզ ե, վոր գյուղական տնայնագործներ վատ և թանկ ապրանքները կմտան, չեն վաճառվի:

Յերեխան ել կարող ե առնել, — բայց վաճառելուց կը տանջվի յեվ փորձված ծերուկը

Զարմանալի չե, վոր արտեխներն ու միությունները յերբեմն չեն կարողանում իսկույն վաճառել տնայնագործի բերած արտադրանքները: Այս կամ այն ապրանքի վաճառելու պայմանները կարող են աննպաստ լինել շուկայում, կարող ե բարձր լինել տնայնագործի նշանակած գինը, վատ լինել հատկությունը, քան գործարանային կամ քաղաքային տնայնագործի ապրանքներինը: Կամ թե կարող ե բերված ապրանքի վաճառելու ժամանակն անհամապատասխան լինել: Վաճառքը կրանդաղի և այն դեպքում յեթե շուկա յեն նետված ավելի շատ տնայնագործական ապրանքներ, քան աշխատավորները կարող են դնել: Այս դեպքում տնայնագործական արտադրանքների մի մասը կմատ չվաճառված:

Կարող ե արդոք միայն ակտ տնայնագործը վերացնել բուլոր խոչընդունելու ը: Ի հարկի վհչ: Ապրանքի հատկությունը, նրա գինը, արտադրության չափը շատ պատճառներից են կախված: Դրա մեջ են մտնում և՛ եժան գնով հում նյութ գնելու և՛ լավ գործիքներ մեքենաներ ձեռք բերելու հնարավորությունները: Առանց արհեստանոցը կարգին սարքավորելու տնայնագործը չի կարող իր արտադրանքն եժանացնել: Պատարկ ձեռքերով շատ բան չես պատրաստի, լավ առարկաներ չես շինի: Իսկ միայնակ-տնայնագործն այնքան միջոցներ չունի, վոր ինչպիս հարկավոր ե կարգը զցի իր արտադրությունը:

Ենչ կը ցանես—այն ել կը հնձես

Միզրույցի ժամանակ, յերբ բացատրվում եր տնայնագործներին թե ինչ ձանապարհներով են արտադրանքները գնողին հասնում, թե ինչի վրա պետք ե ուշադրություն դարձնել դրանցից մի քանիսը թերահավատությամբ ձեռքով ու վոտքով արին: «Այդպես մենք բոլորովին ել ժամանակ չենք ունենա աշխատելու: Նստիր և գլխիդ զոռ առւր, թե վորտեղ ինչ են պատրաստում և հետեւը արտելին, ինչպիս վոքրիկ յերեխային են նայում ու ըստապասիր «թե յերբ առուն ջուր կգա»:

Բայց կային և ուրիշ, ավելի լուրջ մարդիկ: Նրանցից մեկն ասաց՝ ինչ կը միթես—այն ել կը խրթես հասել և ժամանակը, վնար մենք ել խելքի գանքը:

Յեվ իսկապես տնայնագործն այլևս չի ցանկանում ի զուրտ տեղը մեջքը կորացնել: Հեղափոխության բանվորների և զուղացիների տասը տարվա իշխանության ընթացքում տնայնագործներն ավելի գիտակից են դարձել, քան ցարի ժամանակն եյին: Նրանք սկսել են հանկանալ միջնորդ-առևտրականներից հասնող ֆլաները, Յեվ ավելի ու ավելի յե դժվարանում տնայնագործին խարելը:

Այժմ մի կասկած միայն դեռ հեռու յե քշում տնայնագործին արտելից: Պատահում ե, վոր նրա աչքի առաջ արտեխն աշխատում ե, բայց վոչ թե այս գրքի մեջ թված բոլոր բարիքները չեն յերեսում, այլև շատ զգալի վասաներ ե տալիս: Հավաքված գումարները հոսում են հայտնի չե, թե ուր, ապրանքների վաճառքը կարգին չի կատարվում: Թե ինչու յեն մարդիկ նստել վարչության մեջ, հայտնի չե, և թե արտեխն ել ինչի համար ե, նույնպիս հայտնի չե:

Ասված ե՝ «հացը հացատերին—մեկն ել ավել» և լավ գործը փչացնելն ել դժվար բան չե: Վատ տնայնագործն ամենալավ նյութն ել կիշացնի: Ո՞ւմ մեղագրել վարպետին, թե մատերիալը: Այդպես ել արտեխն ե: Յեթե վատ վարչությունը փչացնում ե արտելային գործը, մենք վոչ թե արտելին պետք ե մեղագրենք, այլ վարչությանը: Յեվ միաժամանակ պետք ե ամեն մեկն իր վրա յել նայի: Նեղություն ե կրել արդյոք տնայնագործն իրեն իսկ հարկավոր և իրեն պատկանող կազմակերպություննը վոտքի կանգնացնելու համար, թե վոչ:

ՀԱՅԸ ՀԱՅԱՏԵՐԻՆ—ՄԵԿՆ ԵԼ ԱՎԵԼ

Զարշին արտաքին հիվանդություն և իսկ շատ հաճախ արտելը քանդում, ժանդուագում և ավելի վտանգավոր, ներքին հիվանդությունից՝ տնայնագործների անհամաձայնությունից, նըրանց գործին ծանոթ չլինելուց, արտելի աշխատանքները տանելու ձևը չիմանալուց, Արտաքին հիվանդությունը նկատել հեշտ և նա աչքի առաջ և Փոքրիկ բշտիկն անգամ քոր և կալիս: Իսկ ներքին, ծածկված, նույնիսկ շատ վտանգավոր հիվանդությունը կարող և յերկար ժամանակ քանդել մարմինը և հիվանդը կարող և չնկատել նրան և ուշադրություն չդարձնել նա մաշվում հալվում և, մեկ ել զլափ ընկնում, բայց արդեն ուշ և:

Իր աչքի գերանը չի տեսնում ուրիշի ըյուղն և վորոնում:

Հասկանալի յե, վոր հիվանդությունն արտելի անդամների մեջն և, գործը տանելու նրանց անշնորհքության մեջ—ցավն այն և, վոր հազար տնայնագործներից հաղիվ կամնես յերկուսը, վոր հասկանան այս կանոնադրությունը, վորով ապրում և արտելը և իմանան իրենց իրավունքներն ու պարտականությունները: Իսկ յեթե գործը վատ գնա կոկովին խոսակցություններն ու հարձակումներն արտելային աշխատանքի վրա վոչ միայն անդամների մեջ, այլ և ամբողջ շրջանում, հեռավոր միայնակ-տնայնագործների մեջ՝ «թե արտելը վոչինչի պետք չի, գողերին և կերակրում առանց սովուտի յե աշխատում»: Լավ չի լինի տրդյոք վոր տնայնագործները հավաքվեն և կարդան կամոնադրությունը և լավ ըմբռնեն, թե ինչպիս պետք և տանեն իրենց արտելային աշխատանքը: Այս ժամանակ նրանք կհամոզվեն, վոր «եշը թողած փալանը չափաք և ծեծել»:

Ով և Տերը

Կանոնադրության համաձայն արտելի բոլոր գործերի կատարյալ տերն արտելի բոլոր անդամներն են հանդիսանում: Իրենց կամքը նրանք արտահայտում են ընդհանուր ժամանակում տնայնագործները քննում են գործերը՝ ցուցմունք են տալիս վարչությանը, թե ինչ պետք և անել, ինչ-

միջոցների պետք և դիմել աշխատանքի հաջողության համար: Յեթե անայնագործները տեսնում են վոր վարչության մեջ ինչ-վոր բաներ են կատարվում, պետք և իսկույն անդամների ընդհանուր ժողով հրավիրել և վարչությունից հաշիվ պահանջել: Այս ժամանակ վարչության անդամները, տեսնելով վոր իրենց քայլերին հսկում են, կլախենան գրանցները լցնելու մասին մտածել: Իսկ լավ վարչանդամների համար ընդհանուր ժողովը ոգուատից բացի վոչինչ չի տա: Ընդհանուր ժողովում տրված ցուցմունքները և խորհուրդները նրանց ոգնում են թերություններն ուղղելու և ապագա աշխատանքների ծրագիրն ուղիղ կազմելու համար:

Վերասուզի հանձնաժողովը

Արտելի գործերը ստուգելու համար հաճախակի ընդհանուր ժողովներ հրավիրելն ահագին չարչարանքներ և պահանջում: Նըրանք խլում են աշխատանքի ժամերը: Բացի այդ դժվար և վոր բոլոր անդամները խմբով ստուգեն գրքերը, գրամները, գույքը, հում նյութերը: Այդ պատճառով արտելի գործերի և վարչության գործունեության վրա գիտողություն ունենալու համար ընտրվում և վերսուսուգիչ է անձնաժողով:

Գործունյա աշխատակիցներ ընտրիր, միւս հանախիր ժողովներին

Պետք և շատ լուրջ վերաբերվել վարչության և վերասուզիչ հանձնաժողովի ընտրություններին: Յերեմի ողափար և, վոր իրենք արտելի անդամները հրահրեն ընտրվածներին և պահանջեն ընդհանուր ժողով հրավիրել արտելի գործերը քննության յենթարկելու համար: Յեթե իրենք արտելի անդամները ուշադրի են վերաբերում զեպի գործը, ապա շատ դժվար և արտելի թերությունները և զեղծարարությունները ծածկել: Միշտ ել կարելի յեներս խոթիւ գողերի և ծույլերի շեմքից բըռնել և ժամանակին դուրս քշել:

Ով և ընտրում

Արտելի աշխատավոր լինելու առաջին պայմանն և՝ լինել տնտեսավար մարդ: Յեթե նա իր տանը վոչինչ չի առում, արթեցողությամբ և պարապում, հայտնի յե վորպես խարերա և թա-

կառող—նրան տեղ չըպետք ելինի վարչության մեջ Նա այնտեղ ել կշարունակի իր քաջագործությունները, «գեղեցիկ գործերը»։ Բայց միայն տնտեսությունից հասկանալը քիչ եւ Մեկը լավ աշխատում եւ և մաքուր մարդ եւ, բայց նրա մեջ կրակ չկա գործը տանելու համար, ձեռներեցություն չունի։ Հանձնարարությունները տեղին և բարեխիղ կերպով ե կատարում, բայց նա անշնորհք եւ ուրիշներին ցուցմունքներ տալու, այն մասին, թե գործի շարունակությունն ինչպես պետք ե տանել, թե ինչ անել զոր արտելն առաջ դնա, ոդակար ձեռնարկումներ կատարի։

Գետք ե ընտրել այնպիսի տնայնագործներ, վորոնք և արևտեսավարներ են և ձեռներեցություն ունեն։ Իսկ ով ունի այդպիսի հատկություններ, ի հարկի տեղում ավելի լավ կարելի յե իմանալ։ Բայց սկզբից ել կարելի յե ասել, թե տնտեսավար և ձեռներեց մարդկանցից վորոնք են ավելի ոդտակար արտելի համար։

Զ ո ր ա ց ր մ ա ն յենթարկվածն ավելի մեծ ձեռներեցություն կը հայտնաբերի. Նա յեղել ե քաղաքում, մարդկանց մեջ, ծանոթացել ե, թե ինչպես են աշխատում ուրիշ տեղերում։

Զ ք ա վ ո ր ը կուլակի շահագործումը և կարիքը մինչև կոռկորը զզվեցրել են նրան։ Յեթե նրան հնարավորություն տրվի ավելի բարելավելու իր կյանքը, նա առաջ կշարժի գործն ոգուտ տալով թե իրեն և թե արտելի մյուս անդամներին։

Մ ի ջ ա կ տ ն ա յ ն ա գ ո ր ծ ը, նրա աշխատանքը կարգ ու սարգին ե։ Այդպիսի կարգ ու սարգ ել նա կմացնի արտելի մեջ։ Միջակ-անայնագործն ավելի շուտ կորումի արտելի հարմարություններից, քան չքավորը։ Թե նրա գործերն են սարքին և թե տանն ունեցած աշխատանքի պայմաններն են լավ։ Նրա համար ավելի հեշտ ե սպասել վոր արտադրանքի վաճառման թույլ ժամանակամիջոցն անցնի։ Այդ պատճառով ել նա ավելի ամուր կը կաչի արտելին և կբարձրացնի նրան, ոդտակար աշխատող կլինի արտելում։

Կ ի ն ը նա ընտելացլ ե տնային գործը վարելուն, իսկ արտելն ել նման ե մի մեծ ընտանիքի։

Կ ո մ ուն ի ս տ ա կ ա ն կ ո ւ ա կ ց ո ւ թ յ ո ւ ն ը Հ կ է (բ) հանդիսանում ե բանվորների և գյուղացիների առաջավոր և միաձույլ մասը։ Նա կովում ե աշխատավորության ավելի բարձր կյանքի համար, նրա կարիքն ու բոլոր կապանքները խորտակելու համար, Յեկ աշխատանքի կազմակերպման, և հասարա-

կական կյանքի մեջ կուսակցության ամեն մի անդամ պետք ե առաջին շարքերում գնա։ Արտելի համար կոմունիստը մշտական առաջ մզող ուժ կլինի։

Միայնակ տնայնագործներին արտելի մեջ գրավիր

Սկզբում բոլոր տնայնագործները չեն մտնում արտելի մեջ Դուրսը մնացած միայնակ-տնայնագործները շատ մնաներ են հասցնում կազմակերպված տնայնագործներին։ Նրանք կերակրում են միջնորդ առևտրականներին, իսկ սրանք ել հարձակվում են արտելի վրա։ Յեկ յերկրորդը, վորքան շատ տնայնագործներ մտնեն արտելի մեջ, այնքան ավելի շուտ կամրանա նա, կմեծանա նրա շրջանառությունը։ Այդ դեպքում արտելն ավելի հեշտությամբ կարող ե ընդհանուր արհեստանոց, մեքենաներ ձեռք բերել, ելք-տրոկայաններ հիմնել։

Փողը հաշիվ ե սիրում

Արտելի կանոնադրության մեջ ասված ե, վոր նրա բոլոր գործերը պետք ե մանրամասն գրի առնվին։ Յուրաքանչյուր մի կոպեկ պետք ե հաստատված փաստաթղթեր ու ստացականներ ունենա։ Առանց գրի առնելու ճարպիկ մարդն իսկույն թող կփշի անփորձ տնայնագործների աչքին։ Իսկ գրված հաշիվների դեմ վոչինչ չես կարող ասել։ Հաշվետվություններով ամբողջ արտելը կարող ե իմանալ, թե ինչն ուր գնաց։ Գրանցումներով վերըստուգի հանձնաժողովն ել հեշտությամբ կարող ե ստուգել վարչության աշխատանքները։ Արտելի ամեն մի անդամ իրեն կանոն պետք ե ընդունի, վոր իր արտելում առանց գրանցումների, առանց փաստաթղթերի և վոչ մի կոպեկի չափետք ե ծախսվի։ Որենքով ել յեթե չկան արդարացուցիչ փաստաթղթեր, վարչությունը պարտավոր ե վերցրած գրամները գանձակղին վերագրանքը։

Ուժեղացրու նո արտելը

Կանոնադրության մեջ ասված ե, վոր արտելի անդամը կատարում ե այն աշխատանքը, վոր վարչությունն ենրան հանձնարարում ե առանց վարչության գիտության կամ ընդհանուր ժողովի հատուկ թույլտվության իրավունք չունի վաճառելու վհի իրեն բաց թողնված մատերիալը, վոչ ել պատրաստած արտադրանքը։

Արտելի առանձին անդամներն իրավունք չունեն գնելու և

կողմանակի տեղ ծախելու իրենց արտելին անհրաժեշտ հռւմ նյութերն ու գործվածքները:

Հակառակ դեպքում հենց արտելի մեջ յեղած ուժեղ տնայնագործներից գուրս կգան նոր չարչի-առևտրականներ, և կվնասեն արտելի գործին:

Կուլակներին յեվ չարչի-առեվտականներին արտելիդ սեչ
սի թողիր

Կանոնադրության մեջ մանրամասն ասված և թե ով կարող ե արտելի անդամ լինել ինչ գեպքերում կարելի յի անդամին գույք հանել արտելից և թե ինչ կարգով կարող և արտելի անդամն ինքը գույք զնալ:

Կուտակիր արտելի միջոցները

Կանոնադրության համաձայն արտելի յուրաքանչյուր անդամ մտցնում է իր փայտվճարը։ Առաջ ասվեց, թե ինչ մեծ նշանակություն ունեն սեփական միջոցներն արտելի համար։ Փայտվճարի չափը գորոշվում է ընդհանուր ժողովում։ Զքայլութեայնադներին կարելի յե թույլ տալ, զոր մաս-մաս մուծեն։ Արտելի աշխատանքները հաստատ տանելու համար անհրաժեշտ եր զոր տնայնազործի փայտվճարն աստիճանաբար հասնի նրա ամսական վաստակի կիսին։ Այդ ժամանակ արտելը կարող կլինի կանոնավոր շրջանառություններ անել, պարտքերի տակ չընկնել և գործն որինակելի կերպով դնել։

Վարկ տալուց ընդհանրապես աչքի առաջ են ունենում արտելի միջոցները և գույքը, վորովհետև միայն արտելի ունեցվածքից կարելի յէ պարագը ծածկել և վոչ թե առանձին տնայնագործների։ Վարկի չափն ու շրջանառությունը մեծացնելու համար տնտյնագործներն իրենց վրա յին վերցնում և լրացնեցիչ պատասխանատվություն։ Նրանք կանխիկ դրամ չեն մուծում, բայց ընդհանուր ժողովում վորոշում են կայացնում, թե կարիքի գեպքում համաձայն են այսինչ գումարին պատասխանառու լինել յերկու, յերեք կամ ավելի անդամ շատ, քան իրենց մացրած փայն եւ:

¶rfbrp jbu pbrpbbrp

Կանոնադությունը նախատեսում է և կուլտուր-լուսավորության աշխատանքների լուսավորությունը, գիտակցությունը

Քիչ ոպուտ չեն տալիս, քան գործվածքներ պատրաստելու շնորհքը: Լուսավորությունը հնարավորություն և տալիս իր գործի ոգտակար կողմերը հասկանալ, աշխատանքը թեթևացնել և վաստակի նոր ճանապարհներ գտնել: Գործիքների հետ գիրքն ու թերթն ել հավասար տեղ պետք և գտնեն արտելում:

Ով է հնարել արտադրողական կոռպերացիայի կանոնագործությունը

կանոնադրությունը վոչ վոք չի հնարել. Առաջին տարին՝ չե, վոր արտեխները գոյություն ունեն. Նրանց կյանքում հավաքվել և մեծ փորձառություն. Մասնագետները մշակել են կուտակված ամբողջ փորձը մի շարք կանոնների և հորվածների մեջ ու համաձայնեցրել մեր խորհրդային որենքների հետ. Աշխատելով կանոնադրության հիման վրա, արտելը խուսափում է շատ սխալներից. Մյուս կողմից ել, կանոնադրությունը նպաստում է արտելային աշխատանքի մեջ հավաքված բոլոր լավ կողմերի ոգագործմանը:

Իսկ ամենից զիսավար

Տնայնագործները պետք ե ամուլ սեղմեն իրենց շարքերը համերաշխ աշխատանքի շուրջը. հետաքրքրվին արտելի կյանքով, առանց ընկճվելու համբերին և տանեն ժամանակավոր անհաջողությունները և չլսեն առեւտրականների ու կուլակների քափացներ, վոր նրանք բաց են թողնում վախեցնելու համար:

ԳԼՈՒԽ V

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԵՒԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ
ՏԱՅԱԳՈՐԾԸ

Տնայնագործները մեծ մասամբ չքավորներ են լինում: Գյուղատնտեսությունից ապրուստի համար բավականին յեկամուտ չստանալով, կարիքից ստիպված նրանք զրադշում են զանազան գործվածքներ շնորհուելով:

Խորհրդային իշխանությունը բանվորների յեվ գյուղացիների աշխատավորական լնտանիքն է

Նա հավասարաչափ հոգ և տանում և՝ բանվորների և՝ գյուղացիների մասին, ցանկանում է լավացնել նրանց կյանքը: Մենք

ավելի լավ ենք ասլում, քան 21 թվականին, բայց դեռ կարեքի մեջ ենք: Գյուղում շատ կան լծկաններից դուրկ չքավորներ: Յեթե Խորհրդային իշխանությունն իր ուժերի ներածին չափ հնարավորություններ չստեղծեր նրանց տնտեսությունն ու կյանքը բարելավելու համար, այդ դեպքում մեր պետությունը չեր կարող արագությամբ առաջ գնալ Խորհրդային պետության զարգացման հիմքն առողջ, ապահովված բանվորը և առողջ ապահովված գյուղացին և Տնայնագործական արհեստներն ողնում են շատ գյուղացիների վոչ միայն կերպելիու, այլև բարձրացնելու իրենց տնտեսությունը, ավելացնելու գյուղատնտեսական բարիքների քանակը գյուղում:

Ինչ է ասում կոմունիստական կուսակցությունը

14-րդ կոնֆերանսում կուսակցությունը մեծ ուշադրություն դարձրեց տնայնագործների և նրանց կարիքների վրա: Կուսակցությունը գտավ, վոր ներկայումս տնայնագործական արհեստները մեծ ոգուտներ են տալիու: Ամենից առաջ նրանք վաստակ են տալիս գյուղացուն, իսկ այդ վաստակով գյուղացին վոչ միայն ապրում, այլև գյուղատնտեսությունն և բարձրացնում: Յերկրորդը՝ տնայնագործական արհեստները լրացնում են ապրանքային պաշարները մեր պետության մեջ, Յերրորդը՝ անայնագործները պատրաստում են փորձված բանվորական ուժեր, վորսնք կարող են գնալ և աշխատել գործարաններում ու ֆաբրիկաներում, իրեւ արդեն գործն իմացող բանվորներ:

Հավասարեցնել բանվորների յեվ ծառայողների հետ

Կուսակցությունը համարում է, վոր վարձու բանվորներ չունեցող և ուրիշի աշխատանքը շշահագործող տնայնագործներն ու արհեստավորներն ել նույնպիսի աշխատավորներ են, ինչպես և բանվորներն ու ծառայողները: Զի կարելի նրանց վաճառատավորական տարրեր համարել: Իրավունքները պետք ե տալ նըրանց խորհուրդների, կոոպերացիայի և հասարակական կազմակերպությունների ընտրություններին մասնակցելու համար: Կուսակցության այս վորոշումը շատ կարեու և տնայնագործների համար: Դա նրանց յեռանդ է տալիս խորհրդային իշխանության և իրենց ոգտին աշխատելու համար:

Պետք է մոտեցնել տնայնագործներին պետական արդյունաբերությանը

Տնայնագործի աշխատանքը շատ սերտ կերպով կապված է գործարանների աշխատանքների հետ: Մի կերպում տնայնագործներն են ստանում հում նյութեր և կիսագործվածքներ պետական հիմնարկներից՝ որ մանածները, իսկ մյուս դեպքում՝ գործարաններում ե լրացվում աշխատանքը: Տնայնագործները մեծ կարիք են զգում, մանավանդ հում նյութերի: Հում նյութերի համար նրանք հաճախ ընկնում են միջնորդ-առևտրականների թակարդի մեջ կամ թե մեծ գումարներ են տալիս ավելորդ տեղից: Կուսակցությունը գտավ անհրաժեշտ, վոր պետական մարմինները տնայնագործների կարիքին ընդառաջ գնան և հարկավոր չափով ու մատչելի գներով հում նյութեր մատակարարեն նրանց:

Պետք է միջոցներ տրամադրել

Շատ բարվոքումներ, վոր կարելի յեր գործադրել տնայնագործական արհեստների մեջ չեն կիրառվում միջոցներ չինելու պատճառով: Կուսակցությունն անհրաժեշտ և գտնում լայնացնել վարկերը տնայնագործների համար և տալ այնպիսի վարկեր, վոր համապատասխան լինեն աշխատանքի պայմաններին, մատչելի լինեն թե տոկոսները և թե ժամկետները: Վերջապես, կուսակցությունն անհրաժեշտ և համարել հասուն կումարներ առանձնացնել անայնագործական արհեստների զարգացման և ոժանդեկտուրա: Եթե հում նյութն ու կիսագործվածքները պարամից ավելի յեւ հարկավոր լինում: Այդ նյութերն ել պիտք և վարկով բաց թերնել—ասում է կուսակցությունը:

Ի հարկե պետությունը չի կարող միջոցներ բաց թերնել բոլոր տնայնագործների կարիքները լիուլի բավարարելու համար: Այդ հանգամանքը հաշվի յե առնում կուսակցությունը և ասում ե տնայնագործներն իրենք պետք և քիչ-քիչ խնայողություններ անեն, միջոցներ կուտակնեն, բացի իրենց մուծած փայը: Այդ խնայողությունները մուծելով տնայնագործները կարծես թե վարկ են տալիս իրենց կազմակերպություններին, սրանք ել լայնացնում են շրջանառությունները և ոժանդեկտությունը: Յեկ պրամ-

ներն են պահպանվում և ոգուստ և ստացվում իրենց, տնայնազործների համար:

Նպասել գործվածքների վաճառահանմանը

Կուսակցությունը կողմնակից ե, վոր տնայնագործական արտադրանքներն արտասահման ուղարկվեն և այստեղից բերվեն տնայնագործին անհրաժեշտ այն գործիքները, հում նյութերը, վոր մենք դեռ չունենք: Տնայնագործներն, ինչպես հարկավորն ե, դեռ չեն ոգտագործել արտասահմանյան շուկան և այստեղ տնայնագործության համար ձեռնուու ձանապարհ ե բացվում: Բայց այդ պետական մարմինները պետք ե նպաստեն տնայնագործական արտադրանքները մեր հանրապետության մեջ վաճառելու գործին դրա համար սերտորեն պետք ե կապվել արտադրողական կոռպերացիայի հետ:

Միայն կոռպերացիայի միջոցով

Հասկանալի յե, վոր կուսակցության բոլոր վորոշումներն ու գուտ կրերեն միայն այն դեպքում, յեթե տնայնագործները համախմբված լինեն արտելների և միությունների մեջ: Այլ կերպ հում նյութերն այնպես կրաշխվեն, վոր մեկը լիուլի կստանա, իսկ մյուսը դատարկ կնատի: Իսկ ում ձեռքը շատ ընկնի, նա իր ստացած հում նյութով և վարկով կսկսի սպիկուլյանտություն անել: Աշխատավորական գումարների հաշվին նոր չարչի տուրականներ կառաջանան: Իսկ ինքը, տնայնագործը գոչ մի ու գուտ չի ստանա: Բայց արտելների և միությունների միջոցով այդ նույն հում նյութերը կընկնեն իսկապես կարիքավոր տնայնագործների ձեռքը:

Պետք ե կարգի զցել արտադրողական կոռպերացիան

Արտելներում և միություններում անկարգություններ և սխալներ ել են լինում: Դրանք վնասակար ազդեցություն են ունենում տնայնագործի աշխատանքի և վաստակի վրա: Ժամանակ ե վերջ տալ պակասություններին: Միայն տնայնագործների ինքնագործունեությունը կարող ե ոգնել նրանց ամուր կապ ստեղծել և ամրացնելու արտադրողական կոռպերացիան—սառմ ե կու-

ամակցությունը: Բացի այդ, արտելներին պետք ե շահագրգռել միություն աշխատանքներով: իսկ դրա համար անհրաժեշտ ե նրանց մասնակից անել միությունների ոգուտներին:

Ամեն մի կազմակերպություն—լինի դա արտել կամ միություն լիակատար պատասխանառու յե իր վրա վերցրած պարտականությունների համար: Յեթե նա դրամ կամ հում նյութ և վերցնում վարկով, պարտավոր ե վճարել ճիշտ նշանակված ժամկետին: Միայն այդ դեպքում ի, վոր պետությունը կարող ե ճիշտ ըաշխել տնայնագործների համար առանձնացված գրամմերը: Իսկ յեթե գրամմերը կապ ընկնեն զանազան տեղերում, այն ժամանակ մնացյալներին վճարելու համար վոչինչ չի մնա: Այսոր մի արտել կամ միություն կուշացնի գրամմերը, մտածելով, թե պետությունն առանց այդ ել իր գործը կտեսնի, վազն ուրիշները և այդ ձևով մեկը-մյուսի տուժելով պատճառը կդառնա: Յուրաքանչյուր միության, արտելի և տնայնագործի շահերը պահան-ջում են վերցրած պարտքը ժամանակին վճարել:

Եժանացնել գործվածքները—պահպանել վաստակը

Ապրանքների վաճառքը կարելի յե մեծացնել միայն այն դեպքում, յերե նրանց գներն մատչելի յեն աշխատավորների համար և հատկությամբ լավ են: Դրան կարելի յե հասնել վերադարձերը կրճատելով, վաճառքի գործը տնտեսապես լավ կազմակերպելով, մեքենաների և արտադրության կատարելագործված ձևեր մտցնելով: Այն ժամանակ և գործվածքներն հժան կլինեն, և տնայնագործի վաստակը կը բարձրանա: Կը մեծանա վաճառքը և տնայնագործը կապահովի աշխատանքով:

Վոչ թե խոսեցով, այլ գործով

Մեր զեկավարների խոսքերն իզուր չանցան: Խորհուրդների մամագումարում տնայնագործների վրա մեծ ուշադրություն գարձվեց: Քննվեցին տնայնագործների կյանքի և աշխատանքի պայմանները: պարզվեց, թե ինչով կարող ե Խորհրդային իշխանությունն ոգնել նրանց: Խորհուրդների լլ համագումարը գտավ, վոր տնայնագործական արհեստները մեծ ոգուտներ են քերում՝ նրանք դյուզացիներին ոժանզակ վաստակ են տալիս և

ողնում են վարել գյուղատնտեսությունը, Տնայրագործների արտադրանքները լրացնում են ապրանքային պակասորդը և թուլացնում ապրանքային սովոր:

**ՊԵՏՔ Ե ԼԱՎԱԳՅԻՆԵԼ ՏՆԱՅՆԱԳՈՐԾՅԵՐԻ ԱՇԽԱՏԱԲԵՐԻ
ՎԱՅՄԱՆՆԵՐԸ**

Խորհուրդների լլլ Համագումարն ասաց, վոր պետք և ողնել տնայնագործներին հում նյուեր ձեռք բերելու և համապատասխան վարկ ստանալու խնդրում: Հում նյութը և վարկերը պետք ե անցնեն տնայնագործներին կոոպընկերությունների միջոցով:

Խորհուրդների լլլ Համագումարը գտավ, վոր արտեներին և միությունների մեջ միանալն այն միակ ճանապարհն ե տնայնագործների համար, վորով նրանք կարող են գնալ բանվորների և գյուղացիների հետ: Միայնակ տնայնագործն անկարող ե ազատվել չարչի-առևտրականներից և նրա կապանքներից: Միայնակ տնայնագործին ողնություն ցույց տալն ել շատ դժվար ե:

Խորհուրդների լլլ համագումարի վորոշումները, տնայնագործներին հում նյութ մատակարարելու մասին, արդեն գործով կատարվում ե՝ վեկում ասածից բացի, պետությունը դեռ հատուկ գումարներ ել և բաց թողել դրամական վարկ տալու համար:

Ապրիլի 10-ին հրատարակվել ե կենտգործկոմի և Ժողովությունը գույղական տնայնագործներին և արհեստագործներին տրված արանությունների մասին: Յեվ մայիսի 12-ին հրատարակվել ե Խորհրդային Միության կենտգործկոմի վորոշումը գյուղական արհեստագործներին և տնայնագործներին տեղական տուրքերով և հարկերով հարկադրելու մասին: Դրա մանրամասն բացադրությունները տպագրվել են „Կուսար և արտել“ թերթում և առանձին գրքով հրատարակել ե „Կрестյանская Газета“-ն—«Թի ինչ պետք ե իմանա տնայնագործը և միայնակ-արհեստագործ հարկերի մասին» (գինը 20 կոպ.): Պատմենք համառոտ կերպով, թե վորոնք են այդ արտոնությունները:

Ազատվում են արհեստագործական յեկամային հարկից

Այս արտեները, վորոնք գտնվում են գյուղական վայրերում, անկախ նրանց շրջանառությունից և առանց ի նկատի ու-

նենալու, — կան արդյոք հատուկ սարքավորումներ և շարժիչ մեքենաներ, թե վո՞ւ Միայն մի սահմանափուլ և թուլացնում է վարձու աշխատավորների թիվը արտելի բոլոր անդամների $\frac{1}{5}$ -ից ավել չպետք ե լինի—այդ ել միայն այն աշխատանքների համար, վոր իրենք տնայնագործները չեն կարող կատարել որինակ՝ հաշվետար, գործվածքների մշակման աելնիկայի մասնագետ և այն Արտելն իր առևտրական գործունեության մեջ ազատ և արհեստագործական հարկից, յեթե նա իր գործվածքները վաճառում և անմիջապես արհեստանոցից ձեռքի վրա, կարկատանի սեղաններից, սայլերի վրա, շուկաներում ու բաղարներում և այլ աելերում,—ինչպիս գյուղական, նույնպես և քաղաքային բնակության վայրերում: Քաղաքային բնակության վայրերում հատուկ շենքերի մեջ վաճառք կատարելուց արտոնություններ են արվում: Գյուղական վայրերում կարելի յե վաճառել և հատուկ առևտրական շենքերում:

Տըլում են նույնպես մի շարք արտոնություններ առևտրական առևտրական հարկերի և հարկերի նկատմամբ:

Զգուշացիր չարչիներից յեկ առեվտրականներից

Մեծ են արված արտոնությունները: Խորհրդային իշխանությունը տնայնագործին և թողնում նրա ամբողջ վաստակը: Դյուլուգիական անտեսության և տնայնագործի կյանքը բարեկավելու համար ամենալավ պայմաններն են ստեղծված: Բայց շատ հեշտ ե այդ բոլորը կորցնել, զբա համար բավական ե գրավկել և չարչի-առևտրականների թակարդն ընկնել:

Միայնակ-տնայնադործն ուրիշների գրպաններն ե լցնում

Ի հարկե չարչին իսկույն կհասկանա իր ոգուաները: Նտ անպայման կիջեցնի տնայնագործի աշխատանքի գինը: Եժան կառաջարկի: Զհամաձայնողին նա կասի, — «իզուք ես կոտրափում չեմ վոր զու հարկեր չես վճարում, ուրեմն գու վոչինչ չես կորցնի և առաջգանից պակաս չես ստանա»: Իսկ սպառողին ել նա կգանգատվի, թե հարկերն են միծ: Երա համար յերկու կողմից ել լավ ե՝ նու դարձյալ ոգտվում ի թի տնայնագործից և թի սպառողից:

ԽԱԼ ՏԵԱՅԻՆԱԳՈՐԾԽԱՅԻ

Տնայնագործին, սակայն, ելի իր կոտրած տաշտակը կմա, Խորհրդակին իշխանության ամրող ջանքերն ի զուր կկորչեն, Տնտեսությունը չի լավանա, տնայնագործն առաջվա պես ելի կանքա կարիքի լծի տակ, Արժեք, արզուք, վոր դրա համար մեր դեռ աղքատ գանձարանը զրկվեր մի ավելորդ դումարից:

Թող տնայնագործը մտածի այդ մասին:

ՆԵՐԻԱԿԱԼՈՒՐՅԱՅԻ ՎԻՇՎԱՐԵՆԻ—ՈՃԵՐ ԵՆ ՏԱՔՎԵՆԱԼ

Ճանկելով տնայնագործին տրված բոլոր արտօնությունների սպուտները, չարչի-առեւրականն ել ավելի շատ դրամագույն կուկե, քան առաջ կիտած դրամներով նա ավելի ամուր կը կապկպի տնայնագործի վոտքն ու ձեռքը և զյուղացու մորթու տակ ներս կոսղա քաղաք ու այդակղ ել կսկսի իր վասակար գործը: Այդպիս ել կստացվի՝ վոխարեն ջնորհակարության և ինքն ոգուտ տեսնելու, տնայնագործը կուժեղացնի թշնամուն, վորի հետ Խորհրդային իշխանությունը կուկ և մղում, վորին վերջնականապիս տապալելու համար շատ արյուն և ջանքեր են թափվել:

ԳՅԱ ԱՐՏԵԼ

Գործվածքներն արտելի միջոցով վաճառելուց, հում նյութերն արտելային կարգով գնելուց, ոժանզակ ձեռնարկներ և ընդհանուր արհեստանոցներ հիմնելուց անայնագործը կազատվի այն ագուավի թշվառ զրությունից, վոր հափշտակվել եր աղվեսի կեղծավոր լեզվով:

ԱՄԲԱԴ ԱՐՏԵԼՈՎ ՄՏԵԲ ՄԻՈՒՐՅԱՅԻ ԱԼԵ

Միությունից կարված արտելն ել թիկ գանդաղ, բայց ելի չարչի-առեւրականների և կուլակների աղվեցության տակ կը նկատի. Գյուղում կորսված արտելը լրիվ կապ չունի ուրիշ տեղերի հետ: Ապրանքները վաճառելու համար նա պետք է դիմի, յիթե վոչ իր գյուղի, ապա մի ուրիշ չարչի-առեւրականի: Բայց չէ վոր իսկապիս զրանք իրարից չեն արթերիում՝ ոշունք—շանից, յերկուսը մի տանից:

Միայն արտելը, միուրյունը յեվ նանապետական կինուրնեն են, վոր լիակատար կերպով տպատագրում են տնայնագործի աշխատանքն ու վաստակն, ուրիշի քրտինքը շահագործել սիրողաբից և կարողություն ու բարեկեցություն են տուն ըերում:

ԳԼՈՒԽԱ ՎԻԼ

ԽՈՍՔԻ ՑԵՊԻ ԳՈՐԾ

Շատ լավ գործեր են վաչնչանում, յերբ վոր մարդիկ չեն իմանում թե ինչպիս սկսեն և ուր գիմեն: Տնայնագործներից ել շատերն են մտածում արտելի մասին, բայց զործն առաջ չի զնում միկը ցանկանում ե, մյուսը չի ցանկանում: Գործը սկսում են, բայց վոչ այն տեղից, վորտեղից հարկավոր ե: Զիմանալուց՝ խըճանում են: Տիմուն ես, վոր բոլորը վկլում ե, հակառակորդին ծաղրանքի առիթ տալիս և նույն գործի կողմանիցների յեռանդն ու ցանկությունը խեղդում: Այդպիսի վտանգ կարող է սպանալ գիտակից տնայնագործներին, յիթե նրանք չծանոթանան արակալ յին կարգերին:

ԲԱԺԱՆՈՐԴՅԱԳՐՎԻՒՐ ԿՈՌԱՎԵՐԱՏԻՎ ՔԵՐՔԵՐԻՆ

Գիտակից տնայնագործը արտել կազմակերպելու կարգն իմանում և թերթերից: Արտելային աշխատանքի հակառակորդների միջտ ել կը գտնիլին գյուղում: Այդ հակառակորդների գեմ գիտակից տնայնագործը շատ որինակներ կը բերի թերթից, թե ինչպիս են արտելային կարգով ապրում և աշխատում ուրիշ տեղերում: Անկառակած թերթը գիտակից տնայնագործի շուրջը կը համախմբի նրա ընկերներին: Կը կազմակերպվի մի փոքրիկ խմբակ վորն արգին հեշտությամբ կը հասնի իր նպատակներին:

ՊԵՏ Ե ԿԱԱ ԻԱՍՏՈՎՏԵԼ ԵՐՋՓՈՐԾԿՈՒՄԻ ԻԵՏ

Շրջկործկոմը կարող է մեծ ոգություն ցույց տալ նոր գործին: Գյուղական և շրջանային ժողովներում հարկավոր է հարց գնել արտել կազմակերպելու մասին, ոժանդակություն ցույց տալ գործի սկզբին, շենք արամադրել:

ԶԵՆՔ ՔԵՐԵԲ ԿՈՄԲՁԻՉԻ ՈԺԱՆԴԱԿՈՒՐՅՈՒՆ

Բջիջն անկասկած ընդառաջ կը կնա տնայնագործներին արտել կազմակերպելու համար: Նա լավ խորհուրդներ կտա թե

ինչպես վարվել մեկ կամ մյուս գեղքում, իջրի անդամները ժողովում զուրս կտան պաշտպանելու արտելային աշխատանքը, կպաշտպանեն տնայնագործների խնդիրը շրջործկոմի առաջ:

Կապը կոռապերացիայի հետ

Յեթե մոտակա տեղերում կամ զյուղերում կան սպառղական ընկերություն, վարկային կոռապերացիա կամ զյուղանտեսական ընկերություն պետք է շատ սերտ կապ հաստատել զբանց հետ, չետագայում ամենից առաջ մենք նրանց միջոցով կարող ենք վաճառել մեր գործվածքները, բայց այդ գործի ըստ կը պուտ կարելի յեն յութական ոգնություն ոտանալ նրանցից, Վերջապես կոռապերատիվի աշխատակիցները շատ ոգտակար տեղեկություններ և ցուցմունքներ կտան արտելի աշխատանքները տանելու համար: Դրա շնորհիվ կարելի կը լինի խուսափել մի շարք սխալներից, վոր շատ վնասակար են մանավանդ գործի սկզբին:

Ուրիշների վրա հույս դիր, բայց ինքն ել մի բնիր

Ապահովելով ուրիշ կազմակերպությունների ոժանդակությամբ, գիտակից տնայնագործը չպետք է ձեռքերը ծալած նստի հուսալով, վոր նրա փոխարեն մի ուրիշը կանի այն բոլորը, ինչ հարկավոր է: Յեթե տնայնագործներն իրենք հետաքրքրություն և ձեռներցություն չհայտնարերեն, ապա դրոի ոգնությունն ի դուք կանցնի:

Խրնիթվարը յիշ ուսաւցիչը

Լավ լինի խրճիթ-ընթերցարան հավաքել տնայնագործներին և թերթիր ու գրքեր կարդալ նրանց համար: Ընթերցանության ժամանակ անպայման վիճաբանություններ կառաջանան: Կոռապերացիայի մեջ անփորձ տնայնագործը հեշտությամբ կարող է սիսակել և գործը փչացնել: Այդ պետք է նկատի ունենալ առաջուց: Բարձրաձայն ընթերցանությունից առաջ պետք է լավ պատրաստվել և իմանալ, թե ինչ մտքեր են արված գրքի կամ թերթի մեջ: Լավ հասկանալով և լավ գործ անելով գիտակից տնայնագործը թե իր թշնամիներին կհաղթի և թե նույնչափ հեշտությամբ կհասկացնի անդիտակից տնայնագործներին նրանց սխալները:

Ժ ո դ ո վ

Ցնայնապութներին արտելային գործին ծանոթացներու համար անհրաժեշտ է ոգտագործել բոլոր ժողովական կամ խնդրել, վոր իմացող մարդիկ՝ քջից, կոռապերատիվից և կամ փոխողնության ընկերությունից զեկուցեն, Յեթե նախառի կապեր են հաստատված այդ բոլորի հետ, ապա թե ղեկուցումներ կը զրվին և թե ղեկուցողներ կլինեն:

Քանի տնայնագործներ պետք է լինեն գործը սկսելու համար

Կանոնագրության համաձայն կոռապերատիվ արտելով աշխատելու համար հարկավոր է 5-ից վոչ պակաս մարդ: Համարակալի յի, վոր գործին ճիշտ ստունալուց դժվար չե 5 մարդ գտնել: Իսկ յեթե գործը լավ գնա, մյուսներն ել չեն ուշանա:

Հիմնադիր ժողով

Յերբ հավաքվում են արտել հիմնել ցանկացող 5 տնայնագործներ, կարելի յեն հրավիրել հիմնադիր ժողով: Այդ ժողովուն պետք է քննել և հաստատել կանոնագրությունը և ստորագրել: Վորպեսզի ժողովում շատ վիճաբանություններ տեղի չունենան ավելի լավ կլինի կանոնագրությանը ծանոթանալ և քննության յինթարկել սկզբից, զրույցների ժամանակ:

Վորտեղից ձեռք բերել կանոնադրությունը

Արտադրական կոռապերատիվների որինակելի կանոնագրությունը, վորով սովորաբար աշխատում են արտելները, կարելի յի ստանալ «Հայոնարկուպ» ից՝ արտադրողական կոռապերացիայի Հայաստանի Միությունից: Պետք է գրել նրան (Յերեան, «Հայաստանարկուպ») և նա կուղարկի կանոնագրությունը: Պետք է բերել տալ այդ կանոնագրությունից հինգ որինակ: Զորս որինակները ստորագրվում են և ուղարկվում տոմարագրելու, իսկ մեկը պահպում է գործերի մեջ:

Ուր պետք է ուղարկել տուարագրելու համար

Բոլոր հիմնադիրների կողմից սովորագրված կանոնագրությունը ներկայացվում է ժողովրդական Տնաեսության Խորհրդին տոմարագրելու համար: Կանոնագրություններն ուղարկվում են մի

Հայտարարությամբ մռամակարավես հետեւալ բավանդակությամբ
ժամանակական Տնտեսության Խորհրդի տոմարագրման հանձնա-
ժողովին արտելի հիմնադիրներից:

(գրել արտելի անունը)

- 1) Անուն, հայբանուն, ազգանուն
- 2) Հիմնադիրների բնակավայրը

Հայտարարություն

Սրա հետ կցելով արտելի կանոնագրու-
(անունը)

թյունը 4 որինակից, վորոնք միանդամայն հման են իրար,
խնդրում ենք համապատասխան կոոպերատիվ մատյանի մեջ
մտցնել այդ կանոնագրությունը:

1921 թվի հունիսի 1-ի դեկտեմբեր և այդ գեկրիտի 3 հոդ-
վածը, վոր արգելում են միաժամանակ անդամ լինել միհնույն
տրադրության պատկանող յերկու արհեստագորական կոոպերա-
տիվների կամ միությունների, մեզ հայտնի յեն և մենք հայտա-
րաբում ենք, վոր մեզանից վոչ մեկն անդամ չեն մի վորեն այլ մի-
տահակ արտելի:

Այս հայտարարությունը ներկայացնելու և տոմարագրված
կանոնագրությունը ստանալու, նրա մեջ որենքին չհակասող ուղ-
ղութեար և խմբագրական բնույթի կրող լրացումներ անելու հա-
մար լիազօրում ենք (գրել անունը, հայրանունը և ազգանունը),
վոր ապրում են (գրել բնակության տեղը):

Սրանից հետո հայտարարության մեջ գալիս են բոլոր հիմ-
նադիրների անունը հայրանունը և ազգանունը: Բոլոր հիմնա-
դիրների ստորագրությունները պետք է հասանալ առաջ շրջպործ-
կոմում կամ ժողովատավարի մոտ:

Նպատակահարմար են լիազոր ընտրել նահանգական քաղա-
քում ապրող մեկն ու մեկին, վորապեսզի, կարիք յեզած զեպրում,
նա կարողանա շուտով ներկայանալ տոմարագրության հանձնա-
ժողովին:

Հայտարարությանը պետք է կցել հիմնադիրների ցուցակը
հատուկ ձեռվ:

Հիմնադիրների ցուցակը

Հիմնադիրներից մեկն ու մեկի անգրագիտաւթյան գենքում
նև վորապես ստորագրում են զբագեաները հետեւալ ձեռվ՝ այս

ինչի անգրագիտության պատճառով և նրա անձնական ինքնուզ
ստորագրեց այսինչ այսինչ յանը:

Տոմարագրության համար վոչ մի տուրք չի վճարվում:

Ավատանքը սկսելուց առաջ --վեցին բայլերը

Տոմարագրության կանոնագրությունը ստանալով, անայնագործ-
ները նորից հավաքվում են կազմակերպ չափություն և գործու-
թյուն մասնակից ընտրում են վարչություն և վերաս-
տուգիչ հանձնաժողով: Դրանից հետո արտելը համարվում է
ուրինական պատկան և ձեռնություն կատարություն և կարող է ձեռնար-
կել աշխատանքներին:

Հաւաքի առ ամեն մի բայլ

Ցնթե տնայնադորձներն իրենց արտելային գործը տանեն
գործությամբ, ամեն մի քայլ հաշվի տանելով կամականակին ուղղեն սխալները, այդ զեսպումնարանց գոր-
ծի հաջողությունն ապահովված է:

Առաջին մասը և վերաբերյալ առ պատճենագործութեա
պահպանութեա անձնագիրը պահպանութեա
առ պատճենագործութեա անձնագիրը պահպանութեա

Պահպանութեա անձնագիրը պահպանութեա

Եղանակութեա պահպանութեա անձնագիրը պահպանութեա
անձնագիրը պահպանութեա անձնագիրը պահպանութեա
անձնագիրը պահպանութեա անձնագիրը պահպանութեա
անձնագիրը պահպանութեա անձնագիրը պահպանութեա
անձնագիրը պահպանութեա անձնագիրը պահպանութեա



ԳԻՆԸ 30 ԿՈՊ.